Фундаментальная библиотека

Գիտություն

ՄԱՐՏ
№4 (168)
2004թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

2004 թվականի մարտի 12-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը, որը քննարկեց ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ներածական խոսքը և ԳԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս-քարտուղար Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ «ՀՀ ԳԱԱ 2003 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական ուղղությունների մասին» զեկուցումը:

Ժողովին ներկա էին և ելույթ ունեցան Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԸ և հանրապետության վարչապետ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆԸ:

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ներածական խոսքը



2003 թվականն առանձնահատուկ տարի էր մեր ակադեմիայի համար: Ակադեմիայի հիմնադրման 60-ամյակը կարևորվեց ոչ միայն մեծ հանդիսություններով, այլև առիթ դարձավ տարբեր երկրների գիտությունների ակադեմիաների, գիտնականների, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ուղղակի շփվելու, գիտական ծրագրեր քննարկելու համար:

Հոբելյանական միջոցառումների շարքում կարևոր նշանակություն ունեցան հոբելյանին նվիրված միջազգային գիտաժողովները: Դրանցից առաջինը Երևանի պետական համալսարանի հետ համատեղ կազմակերպված «Կիսահաղորդչային միկրոէլեկտրոնիկա» գիտաժողովն էր, որն անց կացվեց արդեն հինգերորդ անգամ: Սեպտեմբերին կայացավ «Կոմպյուտերագիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ» միջազգային չորրորդ գիտաժողովը, իսկ հոկտեմբերին Ծաղկաձորում ԵՊՀ-ի հետ համատեղ կազմակերպվեց «Մաթեմատիկան Հայաստանում. նվաճումներ և հեռանկարներ» միջազգային գիտաժողովը: Այս շարքի մեջ հատուկ պետք է նշել Երևանի պետական համալսարանի հետ կազմակերպված «Հայագիտական միջազգային համաժողով»-ը: Համաժողովում ուշագրավ հարցադրումներ և արժեքավոր դիտարկումներ եղան հայագիտության արդի վիճակի և զարգացման հեռանկարների մասին: Շեշտվեց սփյուռքի մասնագետների հետ համագործակցությունը սերտացնելու անհրաժեշտությունը: Կարևորվեց հայագիտական միջազգային կենտրոն, հիմնադրամ և պարբերական հիմնելու հարցը:

Կազմակերպվել են նաև Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի 1000-ամյակին և «Սասնա ծռեր» էպոսին նվիրված միջազգային գիտաժողովներ:

ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի և Երևանի պետական բժշկական համալսարանի հետ համատեղ անց է կացվել բժշկա-կենսաբանական հարցերին նվիրված միջազգային գիտաժողով:

Կազմակերպված գիտաժողովներում ձեռք բերվեցին պայմանավորվածություններ հետագա համագործակցության, փոխայցելությունների և համատեղ դրամաշնորհների մասնակցության համար: Չափազանց կարևոր է, որ բոլոր գիտաժողովները կազմակերպվել են Հայաստանի ԲՈՒՀ-երի հետ համատեղ:

ՀՀ ԳԱԱ ինստիտուտների կողմից կազմակերպվել են նաև հանրապետական նշանակության բազմաթիվ սեմինարներ և կոնֆերանսներ:

Պետք է նշել Ակադեմիայի գիտական կազմակերպությունների, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի, Երևանի պետական բժշկական ինստիտուտի մեծ աշխատանքը այս ծավալուն և կարևոր միջոցառումների կազմակերպման և անցկացման գործում

Կարևորն այն է, որ մենք համոզվեցինք, որ Հայաստանում հիմնականում պահպանվում է ժամանակակից գիտության միջազգային մակարդակը, և պետք է շարունակենք այն զարգացնել օգտագործելով միջազգային նվաճումները գիտության ասպարեզում: Այս ամենը բարձր գնահատական էր մեր գիտնականների աշխատանքին:

Տարին առանձնահատուկ էր նաև նրանով, որ առաջին անգամ ՀՀ պետական բյուջեում 2004 թ. նախատեսված է պետական նպատակային գիտական ծրագրերի ֆինանսավորում, ընդ որում հաստատված չորս ծրագրերում գլխադասային կազմակերպությունը Գիտությունների ազգային ակադեմիան է:

Այդ ծրագրերի հաստատմանը նախորդել են լուրջ նախապատրաստական աշխատանքներ: Նախ, ՀՀ ԳԱԱ-ն մշակեց ՀՀ Կառավարության կողմից հաստատված գերակա ուղղությունների անձնագրերը, ուսումնասիրվեցին հանրապետությունում գերակա ուղղություններով կատարված հետազոտությունների ներկա վիճակը և նրանց տեղը համաշխարհային գիտության մեջ: Կատարված հետազոտությունների հիման վրա Ակադեմիայի բաժանմունքները մշակեցին 18 նպատակային ծրագրեր, որոնք այլ կազմակերպությունների ներկայացրած նպատակային ծրագրերի հետ անցան փորձագիտական քննարկումների բոլոր փուլերով: Արդյունքում, որպես 2004 թ. պետական նպատակային ծրագրեր ընտրվեցին հետևյալ աշխատանքները.

* Հայոց պատմության քառահատորյակի նախապատրաստում և հրատարակում,
* կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկա,
* ՀՀ պետական գիտական հաշվողական համակարգի ստեղծում,
* Հայաստանի բնական հումքից նոր հատկություններով նյութերի ստեղծում:

Այս ծրագրերի հաջող կատարումը, ըստ մեզ, կապահովի ոչ միայն նշված ուղղություններով առաջընթացը, այլև, որոշ առումով, կաջակցի հարակից ուղղություններով նոր նպատակային ծրագրերի ֆինանսավորումն ու գիտության զարգացումը Հայաստանում:

Սակայն գիտատար տնտեսություն ունենալու, Հայաստանը մտավոր ծառայությունների տարածաշրջանային կենտրոն դարձնելու համար չպետք է բավարարվել միայն գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների սահմանմամբ: Գիտության բնագավառում բարեփոխումները պետք է վերաբերեն ինչպես գիտական և գիտատեխնիկական ոլորտում տարբեր մակարդակի գերակայությունների ընտրությանը, պետական նպատակային ծրագրերի կատարմանը, այնպես էլ գիտության կառավարման մեխանիզմների կառուցվածքային վերակազմավորմանն ու կատարելագործմանը:

Զեկուցողը անդրադարձավ նաև ակադեմիայի միջազգային կապերին, համատեղ ծրագրերին, ակադեմիական գիտություն-արդյունաբերություն կապի իրական դրսևորումներին: Այդ տեսակետից հեռանկարային ենք համարում Ուկրաինայի գիտությունների ակադեմիայի նորաստեղծ էներգիայի ոչ տրադիցիոն աղբյուրների մշակման ինստիտուտի հետ մեր գիտնականների համագործակցությունը: Հեռք է բերվել նախնական պայմանավորվածություն «Մարս» գործարանի հետ նանոէլեկտրոնային սարքերի, ինֆորմացիոն և կառավարման համակարգերի ոլորտներում ստացված գիտական մշակումների ներդրման ուղղությամբ:

Հաշվետու տարում արտասահմանյան դրամաշնորհների և բարերարների միջոցներով համակարգի ինստիտուտները ստացել են ավելի քան 2 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ նորագույն սարքավորումների դրամաշնորհներ: Նշենք դրանցից մի քանիսը.

* Տեսածրող էլեկտրոնային մանրադիտակ - 61 մլն. 423 հազ. դրամ արժողությամբ և էներգադիսպերսիայի ռենտգենյան միկրովերլուծության անալիտիկ համակարգ - 40 մլն. 870 հազ. դրամ արժողությամբ,
* Ֆիլիպս CM-10 տեսակի էլեկտրոնային մանրադիտակ - 300 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ, որը ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտին նվիրաբերվել է ԱՄՆ-ի Ֆիլիպս FEI Ընկերության նախագահ Վահե Սարգսյանի կողմից,
* Միջուկային-աբսորբցիոն սպեկտրոմետր, 63 հազար ԱՄՆ դոլարի արժողությամբ, որը ՀՀ ԳԱԱ էկոնոսֆերային հետազոտությունների կենտրոնին հատկացվել է ՆԱՏՕ-ի «Գիտություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը հիմնովին վերանորոգել է Մեծ Եղեռնի հուշահամալիրի երեք կառույցները, վերակառուցել է ձայնային և հնչյունային սարքավորումների տեղամասերը, տեղադրել է ժամանակակից տեխնիկական միջոցներ:

Սակայն, միևնույն ժամանակ պետք է նշել, որ դեռևս ինստիտուտի շենքերը հիմնավոր վերանորոգումների խիստ կարիք ունեն, այլապես թանգարանը ստիպված կլինի դադարեցնել իր գործունեությունը:

Ակնհայտ է, որ թեև Ակադեմիայի ֆինանսավորման և նրա ինստիտուտների կենսագործունեության ապահովման խնդիրների լուծման մեջ գլխավոր դերը պատկանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Ակադեմիային շատ օգնեց միջազգային գիտական հիմնադրամների, միջազգային հայկական և այլ բարեգործական կազմակերպությունների և առանձին հովանավորների հետ ընդլայնվող համագործակցությունը: Ակադեմիայի գիտնականները 2003 թ. ավելի շատ դրամաշնորհներ շահեցին միջազգային գիտական ծրագրերի, տեղեկատվական աջակցության, գիտական աշխատությունների հրատարակման, նոր գիտական սարքավորումների ձեռքբերման և այլ ասպարեզներում: Դրանց շնորհիվ ապահովվեց մի շարք ինստիտուտների գիտական սարքավորումների, կապի և գիտական հետազոտությունների հետ կապված այլ հարցերի լուծումը: Այս գործում մեծ դեր կատարեց նաև հայ սփյուռքը Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամը, Հայ բարեգործական ընդհանուր միությունը: Վերջին տարիներին մենք ֆինանսական մեծ օգնություններ ստացանք «Ռուսաստանի հայերի միությունից», «Հրանտ Վարդանյան» ընտանիքից և այլ կազմակերպություններից:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան միշտ մեծ երախտագիտությամբ կնշի այդ կազմակերպությունների զգալի օգնությունը և առանձին անձանց Լուիզ Սիմոն Մանուկյանի, Միքայել Եսայանի, Զավեն Եկավյանի, Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի, Արա Աբրահամյանի, Հրանտ Վարդանյանի, Նվեր Մխիթարյանի, Լևոն Չախմախչյանի անունները, որոնք ակտիվ մասնակցություն ունեցան հայկական գիտության, կրթության և մշակույթի համար բազմաթիվ ծրագրեր իրականացնելու գործում:

Այստեղ պետք է նշել նաև Հայ Առաքելական եկեղեցու շատ կարևոր դերի մասին, որը մշտապես հուսացել և հովանավորել է գիտությունն ու մշակույթը: Եվ միանգամայն օրինաչափ է, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը, ինչպես և նրան նախորդած Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն հա-

⇨2

«Կալեի քաղաքացիները»

(դրվագ)

Ռոդենի տուն-թանգարանը Փարիզում մի հսկայական արվեստի սրահ է, քանզի նրա հայտնի ստեղծագործություններից շատերը հենց այստեղ են: Բայց նրա քանդակները վաղուց թանգարանային նմուշ չեն, այլ զարդարում են հրապարակներն ու փողոցները: «Կալեի քաղաքացիները» Ռոդենի հանրահայտ գործերից է:

Այսուհետև մեր թերթի էջերում դուք հաճախ կհանդիպեք արվեստի ու արվեստագիտության մասին հրապարակումների:

Այսօր կարդացեք 6-րդ էջում:

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

⇨1 յոց կաթողիկոսները ընտրվել են ՀՀ ԳԱԱ պատվավոր ակադեմիկոսներ:

Հաշվետու տարում ՀՀ ԳԱԱ գիտական կոլեկտիվները ստացել են մի շարք կարևոր արդյունքներ գիտության տարբեր բնագավառներում, որոնց մասին մանրամասն տեղեկություններ տրված են տարեկան հաշվետվությունում:

ՀՀ ԳԱԱ-ն շարունակում է հայ գրականության և արվեստի դասականների ակադեմիական հրատարակությունը՝ ավարտվեց Հովհաննես Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակությունը, հրատարակվել է Ավ. Իսահակյանի երկերի լիակատար ժողովածուի առաջին հատորը, ինչպես նաև Կոմիտասի երկերի ժողովածուի 12-րդ հատորը:

Արտասահմանյան գիտական կենտրոնների (ԱՄՆ, Իտալիա, Ֆրանսիա) հետ համատեղ հնագետները հանրապետության տարբեր մարզերում պեղումներ են կատարել, որոնք բացառիկ նյութեր են տվել Հայաստանի հին և հնագույն ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ:

Այսուհանդերձ կան մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են լուծում: Ամենակարևորը՝ ապահովել գիտության մասին Օրենքի կատարումը պետական օղակների կողմից: Անշուշտ, կան հարցեր, որոնց լուծումը դեռևս օրենսդրորեն լրիվ կարգավորված չէ, բայց այսօր հրատապը ոչ թե նոր օրենքների ընդունումն է, այլ արդեն իսկ ընդունված «Գիտական ու գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով ամրագրված նորմերի անվերապահ կատարումը:

Անհրաժեշտ է հստակ սահմանել պետական իշխանության մարմինների և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվող այլ սուբյեկտների կարգավիճակը և վերջնականապես լուծել գիտության կառավարման խնդիրը: Ոչ մի կասկած չկա, որ Ակադեմիան, որը օրենքով (հոդված 8) համարվում է «Հայաստանի Հանրապետության գիտական բարձրագույն կենտրոն» և «...համակարգում է հանրապետությունում իրականացվող հիմնարար գիտական հետազոտությունները», «...ունի հատուկ կարգավիճակ և պետության հետ ունեցած հարաբերություններում առնչվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ», պետք է զբաղվի այդ խնդիրներով: Փորձել կառավարել գիտությունն այլ կերպ, ոչնչով հիմնավորված չէ և բացարձակապես անընդունելի է: Գիտության կազմակերպման և նրա կառավարման եղանակները, այլ երկրներից նույնությամբ փոխառնելու փորձերը ծնում են մեծ թվով կազմակերպչական, կառուցվածքային և շատ այլ հարակից և դժվար լուծելի սկզբունքային խնդիրներ և, ի վերջո, ազդում են գիտական աշխատանքների կատարման, արդյունքների հսկման և ներդրման արդյունավետության վրա:

Գիտությունների ազգային ակադեմիան 1993 թվականից բազմաթիվ անգամ հարց է բարձրացրել, որ 1992 թվականին ընդունված որոշումը՝ գիտության, այսպես կոչված, «թեմատիկ» ֆինանսավորումը արժեքազրկում է ինստիտուտներին, ԳԱԱ-ի բաժանմունքներին և պրոբլեմային գիտական խորհուրդներին, որոնք ստեղծված են՝ ընդգրկելու հանրապետության համապատասխան ասպարեզների հայտնի գիտնականներին: Փաստորեն արդեն ավելի քան 10 տարի գիտությանը հատկացված ֆինանսները բաշխվում են նշված կազմակերպություններից անկախ և հայտնի չէ, թե ո՞վ է պատասխանատու այս աշխատանքների կարևորության, արդյունքի և գիտության անհրաժեշտ ուղղությունների զարգացման համար: «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքը, որը պետք է լուծեր այս հարցերը, առայժմ համարյա չի կիրառվում, և դա բերում է գիտնականների արդար վրդովմունքին Ինչո՞ւ չի կիրառվում այդ մեծ աշխատանքի և նրանից բխող տարբեր իրավական կարևոր փաստաթղթերի արդյունքը՝ ոչ ոք չի կարող պատասխանել, ինչը ամենատարբեր, մասամբ չհիմնավորված, դատողությունների է բերում:

Միաժամանակ Գիտությունների ազգային ակադեմիան իր կողմից պետք է իրականացնի միջոցառումներ, ավելի խստացնելով վերաբերմունքը աշխատանքների ընտրման և նրանց արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Կասկած չկա, որ եթե նշված միջոցառումներն իրականացվեն, ինստիտուտները կստանան լրացուցիչ հնարավորություններ ինչպես պետական բյուջեի միջոցներից, այնպես էլ արտաքին աղբյուրներից:

Անհրաժեշտ է նախաձեռնել նոր քայլեր բարձրագույն դպրոցի հետ Ակադեմիայի ինտեգրման, բուհերում մասնագիտական կրթության մակարդակի բարձրացման ուղղությամբ, այդ թվում շնորհալի երիտասարդների որակապես նոր բուհական կրթության կազմակերպումը հատուկ ծրագրերով՝ օգտագործելով ուսուցման նոր մեթոդներ, բուհական պատրաստման փուլում նրանց ներգրավելով գիտական աշխատանքի մեջ:

Նկատվում է պատրաստվող կադրերի գիտական ուղղությունների ընտրության անհամապատասխանություն ներկա պահանջներին, մինչդեռ կադրային քաղաքականության հիմք պետք է լինի մասնագետների պատրաստումը գիտատեխնիկական և հիմնարար գերակա ուղղություններով:

Մի շարք անգամ մեր գիտնականները հարցեր են բարձրացրել գիտության մասին օրենքի 19-րդ հոդվածին համապատասխան գիտական աստիճան ունեցող անձանց հավելավճար տալու, 13 հազար դրամից պակաս ստացող աշխատողների աշխատավարձերը բարձրացնելու, կես և քառորդ դրույքով աշխատողների սոցապ հատկացումների վերաբերյալ: Այդ հարցերը ներկայացվել են կառավարություն: Հուսով ենք, որ լուծում կստանան:

Ակադեմիայի գիտնականները համոզված են, որ նշված թերությունները կվերացնեն, դրությունը կկարգավորվի: Դրա վառ ապացույցն է, որ հանրապետության կառավարության ծրագրում գիտության հետագա զարգացմանը առաջին անգամ տրված է առաջնային տեղ: Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը Ակադեմիայի 60-ամյակին նվիրված հանդիսությանը նշեց գիտության կարևորագույն դերը մեր հանրապետության կյանքում և ասաց, որ·մենք պետք է հասնենք նրան, որ Հայաստանի գիտությունը տարածաշրջանում լինի առաջնային: Անկասկած, դա ռեալ է:

Այս բոլորը մեզ հուսադրում է և պարտավորեցնում ավելի ճիշտ և նպատակային կազմակերպել մեր աշխատանքները: Այդպիսի հնարավորություն կա և մենք այն պետք է իրականացնենք:

(հրապարակվում է կրճատումներով)

ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս-քարտուղար Վ. Բ. Բարխուդարյանի զեկուցումը

ՀՀ ԳԱԱ 2003 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին

Հաշվետու տարում ԳԱԱ համակարգում գլխավոր խնդիրը եղել է ակադեմիայի 60-տարվա գիտական աշխատանքների հիմնական արդյունքների ընդհանրացումը ազատ տնտեսական հարաբերությունների ներկա փուլում, նրա գիտական գործունեության արդյունավետության բարձրացումը:

Հաշվետու զեկուցման մեջ հարկ չկա կանգ առնել գիտական հետազոտությունների արդյունքների վրա, քանի որ դրան անդրադարձավ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը և այն հանգամանորեն ներկայացված է հրատարակված տարեկան հաշվետվությունում: Արժե միայն նշել, որ ՀՀ ԳԱԱ համակարգում 2002 թ. կատարվել է 364 թեմա, 2003 թ. այդ թիվը մնացել է անփոփոխ, դրա փոխարեն 2002 թ. եթե շահած գրանտների թիվը եղել է 74, ապա հաշվետու տարում հասել է 85-ի:

Հաշվետու տարում անց է կացվել 3 ընդհանուր ժողով: Ապրիլի 30-ի հաշվետու ժողովում Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն ընտրվել է ԳԱԱ պատվավոր անդամ: Արտասահմանյան անդամներ են ընտրվել Ա. Ն. Թավխելիձեն (Վրաստան) և Ա. Ն. Չիլինգարովը (ՌԴ): Հոկտեմբերի 3-ին կայացած ընդհանուր ժողովում ԳԱԱ արտասահմանյան անդամ ընտրվեցին Ա. Ա. Գոնչարը, Ա. Ն. Սիսակյանը (ՌԴ) և Ռ. Բալյանը (Ֆրանսիա):

Հոկտեմբերի 9-ին ընդհանուր ժողովը նվիրված էր ԳԱԱ հիմնադրման 60-ամյա հոբելյանին: ՀՀ նախագահի հրամանագրով 14 գիտնականներ պարգևատրվեցին «Մովսես Խորենացի», «Անանիա Շիրակացի» և «Մխիթար Հերացի» մեդալներով, 7 հոգի ստացան գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ ԳԱԱ ավելի մեծ խումբ աշխատողներ արժանացան ակադեմիայի վաստակագրերի և գովեստագրերի:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Ֆադեյ Սարգսյանը և Սերգեյ Համբարձումյանը 2003 թ. ընտրվել են Ռուսաստանի Դաշնության ԳԱ արտասահմանյան անդամ:

Հաշվետու տարում ԳԱԱ նախագահությունը ունեցել է 28 նիստ, որտեղ քննարկվել է շուրջ 60 հարց: Նախագահությունը քննարկել է միջազգային գիտաժողովների արդյունքները, գիտության կոմերցիոն և ինովացիոն քաղաքականության հարցերը, գիտական զեկուցումներ, հիմնարար գիտական գրադարանի գործունեությունը և գիտական ու գիտակազմակերպական բազմաթիվ այլ հարցեր: Տեղի է ունեցել նախագահության բյուրոյի 47 նիստ:

Հաշվետու տարում ԳԱԱ գիտնականները մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել մի շարք միջազգային գիտաժողովներում: Դրանցից կարելի է նշել «Գիտելիք և հասարակություն-2003» համաշխարհային գիտական ֆորումը Հունգարիայում, Միջազգային Աստղագիտական Միության 25-րդ գլխավոր ասամբլեան Ավստրալիայում, Մաթեմատիկական վերլուծությանը նվիրված միջազգային 4-րդ կոնգրեսը Կամադայում, Առաջատար ցանցային տեխնոլոգիաներին նվիրված միջազգային գիտաժողովը Սլովենիայում, 12-րդ Հնէակենդանաբանական գիտաժողովը Մեքսիկայում և այլն:

Տակավին 1993 թ. Ուկրաինայի գիտ. ակադեմիայի պրեզիդենտ Բ. է. Պատոնի նախաձեռնությամբ ստեղծվեց գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիան, որի խորհրդի մեջ մտնում էին նախկին Խորհրդային Միության հանրապետությունների ակադեմիաների պրեզիդենտները: Ասոցիացիան նպատակ ուներ ինչ-որ չափով պահպանելու ակադեմիաների նախկինում գոյություն ունեցած գիտական կապերն ու համագործակցությունը: Հաշվետու տարում Կիևում հրավիրվեց ասամբլեայի 10-ամյա գործունեության արդյունքներն ամփոփող նիստ: Այստեղ զեկուցումով հանդես եկավ պրեզիդենտ Ֆ. Տ. Սարգսյանը: Նիստում բարձր գնահատականի արժանացավ հատկապես ՀՀ ԳԱԱ-ի գործունեությունը:

Երկկողմ պայմանագրերի հիման վրա շարունակվել են համագործակցությունը և գիտնականների փոխայցելությունները մասնավորապես Ռուսաստանի Դաշնության, Հունգարիայի գիտությունների ակադեմիաների, Մեծ Բրիտանիայի թագավորական միության հետ: 2003 թ. մայիսին համագործակցության հուշագիր է կնքվել ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի և Հնդկաստանի Փենջաբ նահանգի Չանդիգարի գիտական կենտրոնի միջև, որի շնորհիվ Արևելագիտության ինստիտուտի օժանդակությամբ նահանգում ստեղծվեց Կովկասյան ուսումնասիրությունների կենտրոն:

Հաշվետու տարում արտասահմանյան 46 երկրներ են գործուղվել 356 գիտնական, ակադեմիայի ինստիտուտները ընդունել են 346 արտասահմանյան գիտնականներ՝ 30 երկրներից:

ԳԱԱ ղեկավարությունը բազմաթիվ հանդիպումներ է ունեցել նաև արտասահմանյան մի շարք այլ գիտահետազոտական կենտրոնների և միջազգային կազմակերպությունների հետ և քննարկել գիտական համագործակցությանը վերաբերող հարցեր:

2003 թ. հիմնարար գիտական գրադարանում շարունակվել են արդյունավետ աշխատանքները նոր տեխնոլոգիաների ներդրման, համակարգչային շտեմարանի ստեղծման ուղղությամբ: Հաշվետու տարում մուտքագրվել է ավելի քան 22.000 գրադարանային միավոր:

Ակադեմիական բոլոր գրադարաններն իրենց ֆոնդերում ունեն 4 միլիոն 150 հազար, իսկ հիմնարար գրադարանը շուրջ 3 մլն գրադարանային միավոր:

Միջոցների սղության պատճառով հիմնարար գրադարանը հնարավորություն չունի լիարժեք իրականացնելու գիտական ամսագրերի, գրքերի ձեռք բերումը, զրկված է փոստային առաքումների ծառայություններից, որի հետևանքով նվազում է միջազգային գիտափոխանակությունը:

2004 թ. հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ աշխատակիցների ընդհանուր թիվը հասնում է 3911-ի: Այդ թվից գիտական աշխատողներ են 2318 հոգի, որից գիտության դոկտորներ 345, գիտության թեկնածուներ 1010: Նախորդ տարվա համեմատությամբ համակարգի աշխատողների ընդհանուր թիվը պակասել է 484 հոգով:

Ազգային ակադեմիայի կազմում ընդգրկված են 92 ակադեմիկոս և 19 թղթակից անդամ: Ակադեմիան ունի 4 պատվավոր անդամ, 30 արտասահմանյան անդամ և 50 պատվավոր դոկտոր: Ակադեմիայի աշխատակիցների և ասպիրանտուրան ավարտողների կողմից պաշտպանվել են 9 դոկտորական և 29 թեկնածուական ատենախոսություններ:

Հաշվետու տարվա սկզբում ասպիրանտուրայում ուսանում էին 254 երիտասարդ, տարվա վերջին նրանց թիվը հասավ 285-ի, որից արտադրությունից կտրված 158 և արտադրությունից չկտրված 127 հոգի: Ասպիրանտուրա (արտադրությունից կտրված և չկտրված) ընդունվել է 57 երիտասարդ: Ասպիրանտուրան ավարտել են 56 հոգի, որից 10 երիտասարդներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, իսկ 8-ը ատենախոսությունները ներկայացրել են պաշտպանության:

Սակայն մեզ շարունակում է անհանգստացնել ԳԱ ծերացման փաստը. անձնակազմի ծերացման պատճառները բազմաթիվ են: Դրանցից մեկն այն է, որ ինստիտուտները հնարավորություն չեն ստանում աշխատանքի ընդունելու իրենց իսկ պատրաստած երիտասարդ մասնագետներին, քանի որ այդ նպատակով պետական բյուջեից միջոցներ չեն հատկացվում: Այդ խնդիրը քանիցս բարձրացվել և կառավարության ուշադրությանն է հրավիրվել տարեկան հաշվետու ժողովներում, սակայն որևէ արդյունքի չենք հասել:

Մյուս պատճառն այն է, որ չի լուծվում գիտական աստիճանների և թոշակավորման հաշվեվճարի հարցը:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թ. դեկտեմբերին ընդունված ՀՀ օրենքի «Գիտական աշխատողի աշխատանքի վարձատրությունը և թոշակավորումը» հոդված 19-ում ամրագրված է հետևյալը. «Գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի վարձատրությունը բաղկացած է օրենսդրությամբ սահմանված աշխատավարձից, պարգևատրումներից, գիտական աստիճանի, գիտության ոլորտում աշխատանքային ստաժի համար տրվող լրացուցիչ վարձատրությունից» և ապա «Պետությունը գիտական աստիճան ունեցող անձանց կենսաթոշակից բացի տալիս է հավելավճար; որի չափը և տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը»:

Օրենքն ընդունելուց անցել է ավելի քան երեք տարի, սակայն այն կիրառելու հարցում ոչ մի տեղաշարժ չի կատարվել: Մեզ անհանգստացնում է հայագիտության զարգացման հարցը, քանի որ աշխարհի ամենախոշոր կենտրոնը մեզ մոտ է:

Ցավոք, ինչպես հարկն է չի ընկալվում այն հանգամանքը, որ Հայաստանի անկախ հանրապետության ծննդով հայագիտությունը դառնում է ազգային կյանքի վրա ներազդող, նրան ուղղություն տվող հզոր գործոն: Հայագիտությունն է կոչված խթանելու ազգի հոգևոր-մշակութային վերազարթոնքը, պահպանելու ժողովրդի ազգային նկարագիրը, ապահովելու սերունդներին հայեցի դաստիարակելու և հայրենիքին նվիրված քաղաքացիներ պատրաստելու գործը: Նա իր ծանրակշիռ նպաստն է բերում համազգային հոգեբանության մշակման, ազգային միասնության գաղափարին: Ահա թե ինչու հայագիտության զարգացումը պետք է լինի պետության ազգային քաղաքականության առաջնային ուղղություններից մեկը և արդյունավետ գործունեության համար ստանա անհրաժեշտ միջոցներ և հնարավորություններ:

ԳԱԱ ներկայացրած գերակա ուղղությունների մեջ կառավարությունն առաջինը համարեց հայագիտությունը և մտցրեց պետական պատվերի մեջ: Վերջին շրջանում կատարված այդ մոտեցումը հուսադրող է, բայց բավարար չէ ստեղծված ծանր դրությունից դուրս գալու համար: Անհրաժեշտ է դրական այդ տեղաշարժերն ավելի խորացնել և ընդգրկուն դարձնել: Անցած տարվա սեպտեմբերին Երևանում կայացած «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային համաժողովը համակողմանի քննարկումների արդյունքում միանշանակ եկավ մի եզրակացության՝ անհրաժեշտ է պետության հովանավորությամբ, ներսի և արտերկրի բարեգործների օժանդակությամբ ստեղծել հայագիտության զարգացման կայուն հիմնադրամ: Հասկանալի է, առանց Հայաստանի կառավարության ակտիվ միջամտության հույժ կարևոր այդ մտահղացումը՝ չի կարող իրականություն դառնալ:

Գիտության առաջ ծառացած հիմնախնդիրները կենսագործելու, նրա արդյունավետությունը բարձրացնելու հարցում անտարակույս վճռորոշ նշանակություն կարող է ունենալ «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի անվերապահ կիրառումը:

(հրապարակվում է կրճատումներով)

Անդրեյ Կոլմագորովը՝ 100 տարեկան

Ռուս մեծ մաթեմատիկոսը՝ Խորհրդային Միության գիտության խորհրդանիշը ստեղծեց մաթեմատիկոսների մի ամբողջ սերունդ: Վախճանվեց 1987 թվականին, չտեսնելով կոմունիստական ռեժիմի կործանումը:

ՍԵՍՍԱՅԻՆ

Նյութի վեցերորդ վիճակ...

Ինչպես հաղորդում է Ռեյտեր գործակալությունը, Կոլորադո նահանգի համալսարանի Ստանդարտների և Տեխնոլոգիաների Ազգային ինստիտուտի գիտնականները կարողացել են ստեղծել նոր վիճակ, որի օգտագործմամբ (նրանց կարծիքով) կարելի կլինի պատրաստել նոր սերնդի գերհաղորդիչներ՝ կիրառելու տրանսպորտում և բազում-բազում ուրիշ սարքավորումներում ու սարքերում:

Նյութի նոր վիճակը գիտնականները կոչեցին ֆերմիոնային կոնդենսատ, որը այդ կերպ դարձավ նյութի վեցերորդ վիճակ գազից, հեղուկից, պինդ մարմիններից, պլազմայից և Բոզե-էյնշտեյնի կոնդենսատից (հայտնագործվել է 1995 թ.) հետո: Ֆերմիոնային կոնդենսատի ստեղծման համար հետազոտողները գազանման կալիումը սառեցրին բացարձակ զրոյից մինչև մեկ միլիարդական աստիճան բարձր: Այնուհետև գազը ենթարկվեց մագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ներգործության. դրանից հետո կալիումի ատոմների ամպը ձեռք բերեց սովորական գազից արմատապես տարբերվող հատկություններ:

Հայտնագործության հեղինակներից մեկը՝ Դեբորա Ջինը, անմիջապես հայտարարեց նյութի նոր վիճակի երևան գալու մասին: Եթե հնարավորություն լինի՝ ֆերմիոնային կոնդենսատը փոխանցել պինդ վիճակի (տաքացնելիս), ապա ստացված նյութը կարող է ունենալ բարձր ջերմաստիճանային գերհաղորդիչի հատկություններ: Գերհաղորդիչային նյութերը կիրառվում են տեխնիկայի ամենատարբեր բնագավառներում, վերացնում կորուստները էլեկտրաէներգիայի փոխադրման ժամանակ:

- Այսօր հայտնի բոլոր մասնիկները կարելի է բաժանել երկու խմբի բոզոնների և ֆերմիոնների,- ասում է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ալեքսեյ Անդրեևը: Բոզոնների գլխավոր հատկանիշը՝ այն է, որ ցածր ջերմաստիճանների պարագայում ընդունակ են ձևավորել այսպես կոչված Բոզե-էյնշտեյնի կոնդենսատ: Բոլոր մասնիկները, որոնք մտնում են ստեղծված կոնդենսատի մեջ, գտնվում են քվանտային միևնույն վիճակում, այսինքն՝ նրանց վարքը բացարձակորեն միանման է:

Այս կոնդենսատը շատ հարմար օբյեկտ է ուսումնասիրության համար: Սակայն դժբախտությունն այն է, որ մեզ հայտնի բոլոր ատոմները (աշխարհաստեղծման աղյուսները), հանդիսանում են ֆերմիոններ: Իսկ դրանք, համաձայն Պաուլի սկզբունքի, չեն կարող ունենալ միատեսակ քվանտային վիճակ: Այսինքն՝ «մաքուր» ֆերմիոնային կոնդենսատի ստացումը թվում է անհնար:

Սակայն ամերիկացի գիտնականները համեմատություն անցկացրին նյութի ատոմների և էլեկտրոնների (սրանք նույնպես ֆերմիոններ են) միջև, որոնք կարող են միավորվել այսպես կոչված Կուպերի զույգերում: Այդ զույգերը ձևավորվում են որոշ մետաղների հաղորդիչային վիճակի անցնելու ժամանակ:

Երկու էլեկտրոններից կազմված Կուպերի զույգը արդեն կարող է դիտվել որպես Բոզոն: Ակնհայտ է, որ ֆերմիոնային կոնդենսատների ուսումնասիրությունը զգալիորեն առաջ կմղի այն հետազոտությունների ընթացքը, որ տարվում են բարձր ջերմաստիճանայնության և գերհաղորդչայնության բնագավառում, քանի որ զույգ ատոմների ձևավորումը ունի նույն բնույթը, ինչ որ ունի Կուպերի զույգերի ձևավորումը: Ըստ որում, զույգ ատոմները նշանակալիորեն առավել դիմակայում են բարձր ջերմասիճանների ներգործությանը:

«Իզվեստիա»

Եթե փորձենք այարզել, թե մարդու ուղեղը որքան ինֆորմացիոն ալիք կարող է ընդունել, ապա ուղղակի պետք է ասենք՝ անսահման: Ահա այսպես են պատկերացնում գիտնականները մարդու ինֆորմացիոն ցանցը, այնտեղ «ազատ» տեղ չկա: Պատահում է, չէ՞, ձեզ հետ, երբ կարդում ու ընկալում ենք մի բան, նույն պահին հիշում եք մի երկրորդը, մտքում քննարկում ենք երրորդը, չորրորդը, հետո մի նոր բան եք տեսնում ու ըմբռնում: Այսպես՝ շարունակ. Ահա գիտնականները այսպես են պատկերացնում մարդու ուղեղի ընկալման հնարավորությունները:

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Որպեսզի պատկերացնեք, թե ինչի է հանգեցնում Ադրբեջանում ծավալված հակահայկական հիստերիան, նշենք Բուդապեշտում տեղի ունեցած վայրագությունը: ՆԱՏՕ-ն, որ ջանում է մի բլոկի մեջ տեղավորել հայերին ու ազերիներին, հույներին ու թուրքերին, խայտառակվեց: ՆԱՏՕ ձգտող ազերի սպան կացնահարում է հայ սպա Գուրգեն Մարգարյանին քնած վիճակում: Հետո փորձում է նույն ձևի հաշվեհարդար տեսնել մյուս հայ սպայի հետ, բայց նրա ճամփան փակել է լիտվացի սպան:

Ահա ազերիի արյունոտ դեմքը, դե, պատկերացրեք ղարաբաղցիների վիճակը, որոնք ապրում էին մարդասպանների մեջ, մշտական ահ ու սարսափի մեջ: Իհարկե, քաղաքակիրթ Եվրոպան ու խաղաղության պատվար ՆԱՏՕ-ն կասեն՝ կենցաղային պատահար է, ինչ անենք: Ոչ, կենցաղային չէ, պարոններ, դա հակահայկական տանամոլներ շարունակվող քարոզչության հետևանքն է, որը թուրք-ազերական բնույթ է կրում:

Էլ որ ցեղը կարող է կացնահարել քնած մարդուն: Ահա ինչից է փրկվել Արցախը, պարոն ՆԱՏՕ, Եվրախորհուրդ, ՄԱԿ... Ի՞նչ է, ուզում եք սպանդը շարունակվի:

Վավերագրության ճշմարտության լեզվով

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Հասկանալի է, երբ պաշտոնատար պատասխանատու անձիք գործում են հակառակ օրինականության, ավելին, գիտակցված չարամտություններով, հաճախակի իրենց դեմ են հանում ենթակա աշխատողներին, որոնք չեն կորցրել արժանապատվությունը և ծառայության նկատմամբ պարտքի գիտակցումց և որոնք չեն կամենում թույլ տալ շահատենչ քաղաքագետներին խծճելու մարդկանց այնպես, որ չկարողանան տարբերել ճշմարտությունը անճշմարտությունից: Հեղինակը միանգամայն արդարացի է դատապարտել նման վարքագծի վտանգավորությունը և դրանց հետևանքները, հիշեցնելով, որ «քիչ ավելի ուշ, սուտը չհասկանալու և չքարկոծելու մեղքի այդ ամբողջ քարոզչությունը Ռուսաստանի համար դրսևորվեց գեպեչեում»: Այդպես է չգրված, բայց գործող բումերանգի օրենքը: Եղել են և կան այնպիսի ազդեցիկ մարդիկ, որոնք իրենց կարիերան և հանցագործությունները ստեղծում են կեղծիքի վրա: Մտածելով Ղարաբաղում վերևից կազմակերպված նման արարքների մասին ու դատապարտելով նման դրսևորումները, հեղինակը հանգում է համամարդկային ճշմարտության... «Եվ ահա հիմա կարդալով իմ օրագրի նշումները և ակամա խորհելով դրանց մասին, գտնում եմ, եթե դեռևս այն ժամանակ 80-ական թվականների վերջերին և 90-ական թվականների սկզբներին խորհրդային ղեկավարությունը, համաշխարհային հանրությունը կամ... մեծ տերությունները, ինչպես դա տեղի ունեցավ 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո, արժանի քաղաքական և իրավական գնահատական տային Սումգայիթում և Բաքվում տեղի ունեցած իրադարձություններին, ապա հավանական է, որ աշխարհը հեռու կմնար համաշխարհային ներկա ահաբեկչական հետևանքներից»: Մենք կասեինք, արդարությունը հարգող պետությունը չէր փլուզվի:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը և Ադրբեջանի ԽՍՀ ուղարկված ՆԳ զորախմբի քննչական-օպերատիվ շտաբի պետ Վ. Կռովպուսկովը իր վերադասից կարգադրություն է ստանում համապատասխան նյութեր ներկայացնել այդ երկրներում տիրող հասարակական-քաղաքական և օպերատիվ իրադրության մասին: «...Ինչպիսի տանջահար ընտրություն միայն չկատարեցի ես,- բացականչում է հեղինակը,- որպեսզի կայուն դիրք բռնեի ղարաբաղյան իրադարձությունների գնահատականների մեջ»: Կուսակցության և պետական պատասխանատու աշխատողների հովանավորությամբ հայերի նկատմամբ ադրբեջանցի զինյալների և հանցագործ խմբերի կողմից սանձազերծված բարբարոսական, անհիրավական իրադարձությունների պայմաններում զորախմբի շտաբին, ինչպես և խմբի ղեկավար գնդապետ Վ. Գոդկոյին հեշտ չի եղել տեղի ունեցող անցքերի մասին, արդարացի տեսակետներ ներկայացնել երկրի ղեկավարությանը, առավել ևս պաշտպանել դրանք: Ադրբեջանի զինյալ խմբերի կողմից Ղարաբաղում ծավալվել էր բնակչության ունեցվածքի թալանը, մեծաթիվ անասունների հափշտակումը և դրանց տեղափոխումը Ադրբեջան: Ընդ որում անկարելի էր չնկատել,- ցասումով նշում է հեղինակը,- որ քրեական հանցագործությունների հաշվարկած վիճակագրական տվյալները արդբեջանցիներին չէին վերագրվում, ունեին միակողմանի հակահասարակական երանգավորում, մեղսագործությունները, որպես կանոն, միանգամայն անհիրավացիորեն վերագրվում էին հայերին: ԽՍՀՄ պրեզիդենտի հրամանագրի (25.07.90 թ.) համաձայն 1990 թվականին անցկացվել է 160 օպերատիվ օպերացիա անձնագրային ռեժիմի ստուգման, օրենսդրությամբ չնախատեսված զինված կազմավորումների արգելման, անօրինական կարգով պահած զենքերի առգրավման վերաբերյալ: Դրանցից 156-ը անցկացվել է հայերով բնակեցված քաղաքներում և գյուղերում:

Անտեսվում էր այն, որ ազերի տասնյակ զինյալ ջոկատներ, որոնք կազմակերպվել էին մեծամասնությամբ բանտից արձակած հանցագործներով, Ադրբեջանի ՆԳՄ կողմից միտումնավոր չէին գրանցվում: Այդպիսի վիճակ էր ստեղծվել տարածաշրջանում, ինչը հովանավորվում էր ԽՍՀՄ ղեկավարության կողմից: Պատմությունը կրկնվում էր, ակամայից հիշում ես առաջին աշխարհամարտի ժամանակ դաշնակից հայերի նկատմամբ ցարական կառավարության կողմից իրականացվող ստուգումների քաղաքականությունը, երբ հայ ընտանիքներից տանում էին ամեն ինչ, մինչդեռ Ռուսաստանի դեմ կռվող թուրք և քուրդ գերի ընկածներին ազատ էին արձակում իրենց զենքերով, ինչը, քիչ ավելի ուշ, խստագույնս դատապարտվեց ժամանակավոր կառավարության ԱԳ մինիստր, պրոֆեսոր Պ. Ն. Միլյուկովի կողմից:

Հեղինակը զայրույթով ու ցասումով է դատապարտում հայերի նկատմամբ երկրի ղեկավարության կողմից իթականացվող ստոր քաղաքականությունը. «...Հսկա մեքենան գործի է դրվել: Պետությունը անմտածված և հակահումանիստական ամբողջ ուժով դուրս է եկել իր անպաշտպան քաղաքացիների դեմ:

Հենց հայ ժողովրդի երդվյալ թշնամի Մ. Գորբաչովի ցուցումով էլ տեղի ունեցավ ռուսական 4-րդ բանակի զորամասերի անմիջական հարձակումները Ղարաբաղի անմեղ և անզեն ժողովրդի դեմ, որին հետևեց հայկական բնակավայրերի հայաթափումը: Չստորագրելով ԼՂՄ սահմանադրությամբ նախատեսված կարգավիճակի մասին հրամանագիրը (ինչը Արդբեջանի կոմկուսի այդ ժամանակվա առաջին քարտուղար Մութալիբովի ցանկությունն էր), դրանով իսկ Մ. Գորբաչովը սանձազերծեց Ադրբեջանի ղեկավարությանը իրականացնելու հակահայկական ստորացուցիչ քաղաքականությունը: Ելույթ ունենալով Ադրբեջանի գերագույն խորհրդի 1991 թ. փետրվարի նիստում, այդ հանրապետության կոմկուսի ուկրաինացի 2-րդ քարտուղար Պոլյանիչկոն կասեր. «1991 թվականը հայտարարված է Ղարաբաղի տարի, այդ տարին կլինի Ադրբեջանի դժվարությունների վերջին տարին: Ղարաբաղի հողը՝ մեր հողն է և մենք պետք է վերցնենք այն մեր երեխաների համար, օդանավայանները արդեն մերն է»: Իսկ Հեյդար Ալիևը փորձի կարգով հպարտությամբ կպատմեր, որ Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար եղած տարիներին ինչպես հայաթափեց Նախիջևանի տարածքները, որտեղ չմնաց ոչ մի հայ:

Դա տեղի էր ունենում հայ ժողովրդի համար այնպիսի դժվարին ժամանակ, երբ Մեծ միությունը գնում էր դեպի փլուզում, իսկ Հայաստանում իշխանության եկած նոր ուժերը, ինչպես նկատել է հեղինակը, չունեին ղեկավարման անհրաժեշտ փորձ և գտնվելով իշխանության համար պայքարի «էյֆորիկ հաջողությունների վիճակում», չէին կարող պահանջվող կապերի մեջ մտնել կենտրոնական մարմինների հետ: Այդ ժամանակ ղարաբաղյան շարժումը մնաց առանց ռեալ աջակցության, մինչդեռ Ադրբեջանի ճնշումը հայերի նկատմամբ չէր թուլանում, տեսանելիորեն ամրապնդվեց ժողովրդական ճակատը, ինֆորմացիա տարածվեց «Ազգային անկախության կուսակցություն» ստեղծելու մասին, նույնիսկ «գորշ գայլերի» ադրբեջանական բաժանմունք (ընդհանուր կենտրոնը Թուրքիայում): Ադրբեջանի իշխանությունները վերացնելով Ղարաբաղի ինքնավար մարզի սահմանադրական բոլոր իրավունքները, ձգտում էին շուտափույթ ավարտել հայերի ցեղասպանության վաղեմի ձգտումները: Այդ դժվարին նպատակը իրականացվում էր բոլոր միջոցներով. խոշտանգված և տանջահար հայերին իրենց օթևաններից տեղափոխում էին ոչ թե Հայաստան, չնայած դա կարող էր արվել ուղղաթիռների միջոցով, այլ Ստեփանակերտ: «Ադրբեջանի ղեկավարությանը անհրաժեշտ էր բարոյալքել ղարաբաղցիներին, ջարդուխուրդ արված և վախեցած երեխաներին, կանանց, ծերուկներին ցույց տալ, թե ով է այստեղ տանտերը և ում ձեռքերով է կատարվում «Կոլցո» օպերացիան: Հայերի նկատմամբ պաշտոնական Բաքվի դիրքորոշումը բացարձակ ագրեսիվ էր: Ձգտելով իրականացնել «Ղարաբաղը առանց հայերի» ծրագիրը, թշնամին գործադրում էր դրան նպաստող բոլոր հնարավոր միջոցները: «Ստեղծել հայերի համար անտանելի իրադրություն, որպեսզի նրանք հեռանային»...Ղարաբաղի շուրջը ստեղծվել էր խուլ ինֆորմացիոն բլոկադա», ինչը հնարավոր էր դարձնում իրականացնելու բոլոր կարգի բռնություններ...»: Տեսանելիորեն բազմապիսի և բազմաբնույթ դաժանությունները հանգեցրել էին Ղարաբաղի «լինել-չլինելուն»: Ցավոք, այսօր միջազգային ատյաններում քննարկելով Ղարաբաղի խնդիրը, մոռացվում է այդ ամենը և հոլովվում է բռնապետերի համար նախատեսված «տարածքային ամբողջականության» կարգախոսը:

Հրանտ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Աշխատանքի և պատերազմի վետերան

Ընտրվեցին...

ՀՀ ԳԱԱ նախագահությունը հաստատեց ակադեմիայի ինստիտուտների տնօրեններ ընտրվածներին
Փակ քվեարկությամբ ինստիտուտների տնօրեններ են ընտրվել:

ԼԵՆՍԵՐ ԱԲԳԱՐԻ ԱՂԱԼՈՎՅԱՆ - ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ - ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն

ԱԼՊԻԿ ՌԱՖԱՅԵԼԻ ՄԿՐՏՉՅԱՆ - ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի տնօրեն

ՅՈՒՐԻ ՀԱՅԿԻ ԵՈՒԶՈՒՐՅԱՆ - ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն

ՌՈՒԲԵՆ ՏԻԳՐԱՆԻ ՋՐԲԱՇՅԱՆ - ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն

ՌՈԲԵՐՏ ԱԵՌՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի ռադիոէլեկտրոնային սարքավորման ՀԿԲ-ի տնօրեն

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ԳՐԻԳՈՐԻ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ - ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն

ԲԱԳՐԱՏ ՏԻՐԱՆԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ - ՀՀ ԳԱԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն

ԱԴՈԼՖ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՆԹԱՇՅԱՆ - ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն

ՌԱՖԱՅԵԼ ՀՈՎՍԵՓԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի տնօրեն

ԱԵՌՏ ԱՂԱՍՈՒ ՉԱՐՉՈՂԼՅԱՆ - ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի տնօրեն

ՅՈԲԵԼՅԱՆ

Լրացավ անվանի գիտնական, բազմավաստակ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Խոջաբեկյանի ծննդյան 75-ամյակը: Հոբելյարին շնորհավորելու էին եկել հայտնի գիտնականներ, մտավորականներ, հասարակական-քաղաքական գործիչներ:

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը բարձր գնահատեց գիտնականի վաստակը տնտեսագիտության զարգացման գործում: Վլ. Խոջաբեկյանին շնորհավորեցին նաև Գևորգ Խանիկյանը, դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը, ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Հովհաննիսյանը, գրականության ինստիտուտի տնօրեն Ազատ Եղիազարյանը, պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրեն Գևորգ Պողոսյանը, հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արամ Քալանթարյանը, մեխանիկայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը, ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը և այլոք: Ազգային վիճակագրության ծառայության ուղերձը գիտնականին հանձնեց Ստեփան Մնացականյանը: Հոբելյարին շնորհավորեցին նաև ժողտնտեսության ինստիտուտի ռեկտոր Գրիգոր Կիրակոսյանը, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի անունից շնորհավորեց Գրիշա Ղարիբյանը, կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտի անունից Սամսոն Գալոյանը: Բոլոր ելույթներում փաստվում էր գիտնականի տասնամյակների անխոնջ աշխատանքի արդյունավետությունը, ձեռք բերած արդյունքների կարևորությունը: Խոջաբեկյանը 327 հրատարակված աշխատությունների, այդ թվում ավելի քան մեկ տասնյակ մենագրությունների հեղինակ է: Նրա բազում աշխատություններ արդեն թարգմանվել են ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն գիտնականին բերելով արժանի ճանաչում արտասահմանյան երկրներում: Խոջաբեկյանը արժանացել է բազմաթիվ մրցանակների, վերջերս էլ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից պարգևատրվեց Մովսես Խորենացու անվան շքանշանով:

Հոբելյարին շնորհավորելու էր եկել նաև Սիլվա Կապուտիկյանը: Բանաստեղծուհին ջերմ խոսքեր ասաց գիտնականի հասցեին՝ փաստելով, որ նա չնայելով իր առողջական վիճակին, նվիրվել է հայրենի գիտության զարգացմանը:

«Գիտություն» թերթի խմբագրակազմը միանում է հնչած բոլոր շնորհավորանքներին և մաղթում անվանի գիտնականին քաջառողջություն և երկար տարիների ստեղծագործական հաջողություններ:

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ



Այսպես՝ ամեն օր, ամիսներ, տարիներ... Գիտությունը համառության ու ոգեշնչի վարպետ է...

Տպագիր և... ինտերնետային

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «5-րդ դարի գրաբարի լիակատար բառարան» թեմատիկ խումբն ունի ընդամենը 7 գիտաշխատակից: Բառարանի նպատակն է ներկայացնել հայ հին մատենագրությամբ ավանդված բառապաշարը վկայությունների ժամանակագրական հերթականությամբ: Ըստ նախապես հաստատված ծարգրի, սկզբնապես կազմվել է 5-րդ դ. ինքնուրույն մատենագրության բառապաշարը: Այժմ բառարանի քարտարանը լրացվում է թարգմանական գրականության բառապաշարով: Խմբի աշխատակիցները տասնամյակներ շարունակ կազմել և հրատարակել են բազմաթիվ համաբարբառներ, ընդ որում ոչ միայն հայ մատենագիրների, այլ նաև օտար հեղինակների, որոնք թարգմանվել են 5-6-րդ դարերում: Խմբի ղեկավարի՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտեմ Սարգսյանի կարծիքով, վաղուց էր հասունացել դասական գրաբարի լիակատար բառարան ստեղծելու անհրաժեշտությունը:

Բնական է, որ շուրջ 2 դար առաջ Հայկազյան բառարանի հեղինակները չէին կարող ընդգրկել 5-րդ դարի հեղինակների բոլոր բառերը: Հարկ է չմոռանալ նաև, որ Հայկազյան բառարանը ժամանակագրական առումով ավելի լայն կտրվածք ունի: 5-րդ դարի գրաբարի պատմական բառարան կազմելու ներկա փորձը խարսխված է համակարգչային ժամանակակից մեթոդների կիրառման վրա: Բառարանի կազմման համար նախատեսված էր 4 տարի: Հիմնական աշխատանքները գրեթե ավարտված են, պատրաստ է լիակատար բառացանկը, ճշգրտված են իմաստային տարբերակումները: Ըստ էության շուրջ մեկ տարի է անհրաժեշտ բառարանի վերջնական խմբագրման և այն հրատարակության պատրաստելու համար:

Արտեմ Սարգսյանի համոզմամբ, այս աշխատանքը շարունակական պետք է լինի: «Մոտ ապագայում պետք է ստեղծել 6-8-րդ դարերի գրաբարի պատմական բառարանը, մի առանձին հատոր պետք է ընդգրկել Նարեկացու և իր ժամանակաշրջանի բառապաշարը: Այս ձևով համակարգիչների մեջ պետք է մուտքագրվի մինչև 17-րդ դարը ներառյալ գրաբարի բառապաշարը: Եվ միայն դրանից հետո կարելի է ասել, որ ունենք գրաբարի լիակատար բառարան-շտեմարան, որտեղ բոլոր բառերը ներկայացված են իրենց վավերացված օրինակներով»:

Հարկ է նշել, որ բառարանը լինելու է 2 տարբերակով՝ տպագիր (գրքի տեսքով) և ինտերնետային: Հեղինակները կարծում են, որ բառարանը ոչ միայն հայագետներին օգտակար կլինի, այլև բոլոր նրանց, ում անկեղծորեն հետաքրքրում են մեր պատմամշակութային արժեքները:

Նարինե ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հանգույցը նորացվեց...

ՀՀ ԳԱԱ-ում կայացավ Հայաստանի ազգային պատկերասրահի էլեկտրոնային էջի շնորհանդեսը: Նորացված էջը (http://www.gallery.am) պատրաստել է ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակությամբ, «Արվեստ և մշակույթ» ծրագրի շրջանակներում: Հայաստանի ազգային պատկերասրահի WEB-հանգույցը տեղադրված է Հայկական ակադեմիական հետազոտական ցանցում (ASNET-AM) և սպասարկվում է ԳԱԱ ԻԱՊԻ մասնագետների կողմից: Եթե 2000 թ. էջը պարունակում էր ընդամենը 250 ցուցանմուշ և ներկայացնում էր միայն գեղանկարչությունը, ապա նորացված էջում տեղադրված է գեղանկարչության, քանդակի, դեկորատիվ-կիրառական արվեստի, գծագրության, փորագրության 657 ցուցանմուշ: Վերոհիշյալ ցուցանմուշներից 50-ը շրջվող են, այսինքն դրանք կարելի է դիտել տարբեր կողմերից:

Էջը 2 լեզվով է՝ անգլերեն և հայերեն: WEB-հանգույցը այժմ պարունակում է նաև 300-ից ավել հայ և արտասահմանյան հեղինակների կենսագրական տվյալներ: Ներդրվել է նաև ճկուն որոնման համակարգ, որը թույլ է տալիս գտնել ցանկալի ցուցանմուշները և հեղինակներին:

Լրատվական ծառայություն

ԳԻՏԵԼԻՍԸ ՀԱՐԿ Է ԲԱՐԳՐԱՎՈՐՈՒՄ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

ԿԱԼՑԻՈՒՄԸ ոսկորների, ատամների և եղունգների հիմնական շինանյութն է: Կալցիումն անհրաժեշտ է նաև մկանների համար, մասնակցում է նյութափոխանակությանը, արյունաստեղծ գործողությանը, արգելակում միկրոօրգանիզմների թափանցմանը արյան մեջ, նպաստում անոթների թափանցելիության նվազմանը և դրանով էլ բարձրացնում օրգանիզմի դիմադրողականությունը վարակի և թունանյութերի հանդեպ: Կալցիումը բարերար ազդեցություն է ունենում նյարդային համակարգի վրա, ունենում հակաբորբոքային ազդեցություն, կարգավորիչ դեր խաղում ջերմաստիճանի եղանակային փոփոխության ժամանակ:

Կալցիումը մշտապես «դաշինքի» մեջ է ֆոսֆորի հետ: Կալցիումի ողջ պարունակության մոտ 99 %, իսկ ֆոսֆորի 70-77 % մեր օրգանիզմում մտնում են կմախքի կազմության մեջ: Մարդու օրգանիզմում պարունակում է 1-ից մինչև 2,2 կգ կալցիում և մոտ 650 գ ֆոսֆոր: Ֆոսֆորի և կալցիումի աղերը առանց մեկը մյուսի մարդու օրգանիզմի կողմից չեն կարող յուրացվել:

Սելենը երկար տարիներ համարվում էր որպես թույն: Նա իսկապես թույն է, բայց որոշակի չափաբաժնից ավելի լինելու դեպքում. քիչ ավելի՝ վնասակար է, քիչ պակաս՝ դարձյալ վատ է: Եվ այդ քիչ-քիչը այնքան չնչին չափով է փոքր, որ զգալի չի լինում: Առողջության համար օրգանիզմին անհրաժեշտ է ընդամենը 0,00001 գ սելեն:

60-ական թվականներին հայտնաբերվեցին սելենի օգտակար-հատկությունները: Տարածվեցին կարգախոսներ. «Առանց սելենի չկա առողջություն», «Սելենն ու Ե վիտամինը բուժում են սիրտը», «Սելենը երկարածգում է երիտասարդությունը», «Սելենը փրկում է մեզ քաղցկեղից» և այլն: Նոր-Զելանդիայում և Թուրքիայում, որտեղ բուսահողի մեջ սելենի պարունակության խիստ պակասություն էր նկատվում, սկսվեց արական սեռի նորածինների անբացատրելի հանկարծամահության դեպքերի աճ: Հետագայում պարզվեց, որ դա կապված է սելենի անբավարարության հետ:

Սելենը բարձրացնում է մեր օրգանիզմի դիմադրողականությունը միջավայրի անբարենպաստ պայմանների և վարակի հանդեպ՝ պաշտպանելով մեզ զանազան հիվանդություններից: Բայց, ինչպես նշել ենք, սելենի ավելցուկը վտանգավոր է: Դրա փոքր-ինչ ավելցուկից մարդիկ կորցնում են մազերն ու եղունգները, այդպիսի հիվանդությունը կոչվում է «սելենոզ»: Բարեբախտաբար կան այնպիսի բույսեր, որոնք պարունակում են հենց այնքան սելեն, որքան անհրաժեշտ է մեր օրգանիզմին: Սելենը, ինչպես և Ե վիտամինը, կանխարգելում է լյարդի հիվանդությունը:

Մագնեզիումը քիմիական այն տարրն է, որն արդյունավետ է ազդում այն բոլոր գործողությունների վրա, որոնք կատարվում են մեր հյուսվածքներում: Մագնեզիումի իոնը հեշտացնում է կենսական գործընթացները, իսկ նրա պակասը արգելակում այն: Մագնեզիումի իոնները առանց բացառության մասնակցում են բոլոր այն կենսական գործընթացներին, որոնք կատարվում են մեր օրգանիզմում՝ նյութափոխանակության, սպիտակուցների ձևավորման, մաքրման և այլն:

Ցինկը խիստ անհրաժեշտ է մեր ոսկորներին ու մաշկին: Ոչ վաղ անցյալում պարզվել է, որ հարբեցողությամբ, աթերոսկլերոզով, մարմնի վրա զանազան խոցերով, լյարդի ցիրոզով, սրտի հիվանդություններով տառապող հիվանդների մոտ, որպես կանոն, բավարար չէ (նվազ է) ցինկի պարունակությունը: Ցինկն անհրաժեշտ է ոսկորների ձևավորման համար: Ցինկի պակասի դեպքում ոսկորները դառնում են ծակոտկեն, իսկ ծակոտկենության մեծացմանը նպաստում է կալցիումի, ֆոսֆորի, ֆտորի, մագնեզիումի, կայծքարի և ցինկի պակասությունը: Ցինկն այն երկու նյութերից մեկն է, որի պակասը նպաստում է ընկնավորության առաջացմանը (երկրորդը, ինչպես ցույց են տվել հետազոտությունները, տաուրինն է):

Լյարդում առկա A վիտամինը գործում է միայն ցինկի առկայությամբ: Եթե ցինկ չկա, ապա որքան էլ մենք A վիտամին ընդունենք, միևնույն է, մենք A վիտամինի պակասը համալրել չենք կարող, քանի որ այն մնում է ամուր կապված լյարդին և ազատվել չի կարողանում, իսկ արյունն էլ մաշկին, աչքերին ու այլ հյուսվածքներին վիտամին A տալ չի կարողանում: Բժիշկների մի պատկառելի մասը գտնում է, որ մտագարության (շիզոֆրենիա) որոշակի տիպերն արդյունք են սննդի մեջ ցինկի, B6 վիտամինի, մագնեզիումի և մանգանի պակասի:

Երկաթն անհրաժեշտ է մեր օրգանիզմի լիարժեք գործունեության համար: Երկաթը մասնակցում է օրգանիզմի արյունաստեղծ (հեմոգլոբինի ստեղծման) գործողությանը: Առանց երկաթի մեր ուղեղի հյուսվածքները, ներքին սեկրեցիայի գեղձերը, ինչպես նաև ամբողջ մարմինը չի կարող ապահովվել թթվածնով:

Օրգանիզմի անբավարարվածությունը երկաթով առաջացնում է արյան հիվանդություններ. տեղի է ունենում ուժերի անկում, ինքնազգացողության վատացում, մաշկի անբնական դալկացում և այլն:

Պղինձը դեռևս վաղ ժամանակներից համարվել է հատիկավոր կուլտուրաների աճեցման անհրաժեշտ տարրերից մեկը:

Պղնձի պահանջարկ ունի նաև մեր օրգանիզմը: Հայտնի է, որ պղնձահանքերի բանվորները չեն հիվանդանում արյան ճնշմամբ (հիպերտոնիայով), ռադիկուլիտով, չարորակ ուռուցքների առաջացմամբ: Ճիշտ է, մինչ այժմ դեռևս դրանց գիտական բացատրություն գոյություն չունի, բայց փաստը մնում է փաստ:

(շարունակելի)

Հրաչիկ ԱՎԱԳՅԱՆ
Երկրահանքաբանական գիտությունների դոկտոր

ԱՇԳԱՐԱԳԱՐՁ

Գիտնականները կառուցում են «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» - 2-Ը

Մի քանի տարի առաջ «Գիտություն» թերթը պատմել է Մավրիկուս կղզում (Մասկարենյան արշիպելագ) 300 տարի առաջ ապրող մի հսկա բադի նման չթռչող թռչունի մասին: Երկու մետր բարձրություն և 3 մետր երկարություն ունեցող այդ «բադի» կմախքը իր պատվավոր տեղն ունի Պորտ Լուիի թանգարանում: Մենք հրատարակել ենք և այդ թռչունի վերակազմությունը: Այժմ՝ նոր մեկնություն, նոր տվյալներ: Հնարավոր է, արդյոք, վերականգնել դոդոյին (դյուրահավատ, միամիտ, տհաս), չէ որ նրա կմախքից առանձնացրել են դոդոյի ԴՆԹ-ի նմուշը: Ստորև՝ մանրամասներ:

Կենդանական և բուսական աշխարհի անհետացող տեսակները ներմուծվում են տվյալների (տեղեկությունների(բանկ

Եթե մեր սերունդներին վիճակված չէ տեսնելու կենդանիների, թռչունների, ծկների, ինչպես նաև բույսերի բազմաթիվ տեսակներ, որոնք մարդու գործունեության պատճառով դատապարտված են անհետացման, ապա, ծայրագույն դեպքում, կարելի է շատ բան իմանալ կոմպյուտերային «բնության արխիվից»:

Օքսֆորդի համալսարանից ցնցող լուր ստացվեց, անգլիացի գիտնականները կարողացան ստանալ 300 տարի առաջ Մավրիկուս կղզում հոլանդացիներից ոչնչացված դոդո նշանավոր թռչունի ԴՆԹ-ի: Համալսարանի կենդանաբանության դեպարտամենտի ներկայացուցիչ Ալան Կուպերը հայտարարեց, որ չնայած դոդոյի կմախքը, որի վրա աշխատում էին հետազոտողները, մի քանի մասից էր բաղկացած և չափազանց վնասված էր, չխանգարեց գիտնականներին հասնելու իրենց նպատակին՝ որոշել թռչունի ԴՆԹ-ն: Այժմ հնարավորություն է ստեղծվել վերականգնել հավիտյանս անհետացած դոդոյի «տոհմածյուղը»:

Նրա անունը, որպես կենդանի բնության նկատմամբ մարդու հիրավի անմիտ ու բարբարոս վերաբերմունքի օրինակ, դարձավ մավրիկյան փոխակերպված ասացվածք՝ «մեռած է դոդոյի պես»: Այդ մարդամոտ ու բարի արարածը, որը մի փոքր հիշեցնում է հնդկահավին, իր հաստ ու կեռ կտուցով և կարճլիկ թերաճ թևիկներով զոհ գնաց համադամասերների ախորժակին: Նրա միսը շատ համեղ էր: Իսկ նորածնության սիրահար կանանց խելքահան էին անում անմեղ թռչունի գորշ-երկնագույն գեղեցիկ փետուրները... Ավա՜ղ, դոդոյին այլևս չենք վերադարձնի: Բայց կարող ենք այնպես անել, որ երկրի վրա գոյություն ունեցող ֆլորայի և ֆաունայի տեսակները չկրկնեն նրա տխուր պատմությունը: Դա մարդկային ուժերի սահմաններում միանգամայն հնարավոր է... Խնդիրը հրատապ է. շրջակա միջավայրի պահպանության համաշխարհային միության տվյալների համաձայն վերջին հինգ հարյուր տարվա ընթացքում երկրի երեսից անհետացել են կենդանական աշխարհի 816 ներկայացուցիչներ: Իսկ ամենամոտ ապագայում ոչնչացում է սպառնում մի քանի հազարի: Հազվագյուտ տեսակների համար առանձնահատուկ վտանգի գոտիներ են Բրազիլիան, Չինաստանը, Հնդկաստանը և Ինդոնեզիան: Ֆլորայի և ֆաունայի որոշ ներկայացուցիչների անունները գրանցված են Կարմիր գրքում: Դրանք կարող է չհարատևեն 21-րդ դարում: Ահա դրանց մասին է կոմպյուտերային տեղեկատվային բանկ ստեղծելու գաղափարը, որը պատկանում է բրիտանական գիտնականներին: Այն իրականացավ Անգլիայի հարավ-արևմտյան Բրիստոլ քաղաքում, որտեղ ամենակատարյալ կոմպյուտերների օգնությամբ ստեղծվում է յուրահատուկ «բնության արխիվը»: Ինտերնետի միջոցով այն մատչելի կլինի թանգարաններին և դպրոցներին, գիտական հաստատություններին և պարզապես ցանկացողներին: Առասպելական Նոյյան տապանի համեմատությամբ էլեկտրոնային նախագիծը ստացավ սրամիտ անվանումը՝ «Նոյյան տապան-2»:

«Հյուլեթ պակկարդ» ընկերության լաբորատորիաներից մեկի տնօրեն Դեվիդ Դակկը, որը «արխիվի» համար կոմպյուտերային սարքավորումներ է հայթհայթում, հայտարարել է, թե սկզբում նախատեսվում էր ֆլորայի և ֆաունայի յուրաքանչյուր տեսակի համար առանձնացնել ինֆորմացիա, որը կլիներ 10 րոպեանոց կինոխրոնիկա, վեց լուսապատկեր, 3 րոպեանոց ձայներիզ-ձայնաշար: Բայց հետո որոշվեց, առանձնապես հետաքրքիր նմուշների համար բացառություն անել. օրինակ լեռնային գորիլլաների մասին ֆիլմը կարող է բազմաժամ լինել:

Ինչպես հայտնի է Նոյի փայտե տապանում էին գտնվում թռչուններ, գազաններ և անասուններ, գետնի վրա սողացող բոլոր զեռունները: Բրիստոլի ժամանակակից կոմպյուտերային կենտրոնում տվյալներ են ժողովելու կենդանիների 6 հազար տեսակների և բույսերի 30 հազար տեսակների մասին, տեսակներ, որոնք գտնվում են ոչնչացման եզրին, ինչպես նաև տեղեկություններ 20-րդ հարյուրամյակում կատարված ոչնչացումների մասին: Օրինակ տասմանյան գայլի մասին, որը ոչնչացել է 70 տարի առաջ:

Ինչպես կարծում են բրիտանական գիտնականները, եթե Նոյը կարողանար տեսնել այսօրվա տապան-2-ը, հավանաբար զոհ կմնար:

Ռուսերենից թարգմանեց՝
Ջ. ՉԱՏԻՆՅԱՆԸ

Բուդդայի պայթեցված արձանները փորձում են վերականգնել

Իտալացի ինժեներները ավարտեցին ժայռակոփ որմնախորշերի ամրապնդման աշխատանքները: Այնտեղ մեկուկես հազարամյակից ավելի վեր էին խոյանում 2 Բուդդաների վիթխարի արձանները: Դա մինչ 2001 թվականի ապրիլն էր, երբ թալիբները բարբարոսաբար պայթեցրին նրանց:

Բորիս ՊԻԼՅԱՑԿԻ

Երբ թալիբների հոգևոր առաջնորդ մոլլա Մոհամմեդ Օմարի հրամանով (ի դեպ առայսօր ամերիկացիները նրան չեն գտել) աֆղանական Բամփան գավառում ոչնչացրին «իսլամի ուսմունքին հակասող» բուդդաների 38 և 53 մետրանոց հսկայական արձանները, թվում էր, թե համաշխարհային կուլտուրայի համար նրանք կորսվեցին անվերադարձ: Սակայն տարբեր երկրների հնագետներն ու այլ մասնագետներ հույսները չկորցրին երբևիցե հարություն տալու հնագույն վարպետների հազվագյուտ ստեղծագործությանը: Եվ ահա առաջին քայլերը այդ ուղղությամբ արված են:

Համարյա 2 ամիս «Ռոդիո» իտալական ինժեներա-տեխնիկական ընկերության կողմից գործուղված անձնակազմը աշխատում էր այն որմնախորշերում, որտեղ նախկինում գտնվում էին արձաններ: Դրա համար նրանք ստիպված էին ամեն օր զառիթափ ժայռերի վրայով իրենց աշխատավայրը իջնել պարաններով կապված: Նրանց առջև դրված խնդիրներից էր. ամրացնել ժայռակոփ վիթխարի այն ուղղանկյունները, որոնց վրա նախկինում տեղադրված էին արձանները: Ավազաքարը, որից առաջացել է ժայռային հանքատեսակը, կարող էր ամեն րոպե փլվել ոչ միայն այն պատճառով, որ երկուսուկես տարի առաջ վնասվել էր թալիբների գնդակոծությունից, երբ զենքով ոչնչացնում էին Բուդդաներին, այլ նաև աֆղանական դաժան ձմեռվա և կիզիչ տապի ջերմաստիճանների վայրիվերումներով:

Ապառի փլուզումը կանխելու նպատակով նրա ճեղքերը 14 տոննա ցեմենտ լցրին: Ընկերության ներկայացուցչի հայտարարությամբ մնացած փոքր ճեղքերը կսվաղվեն ավելի ուշ, այնպես որ, այժմ որմնախորշերին անմիջապես վնաս չի սպառնում: Արձանների վերականգման նախագիծը գտնվում է ՅՈՒՆԵՍԿՈ-ի վերահսկողության տակ (խնամակալության): Արդեն կատարված աշխատանքների արժեքը կազմում է 400 հազար դոլար: Օգնության են հասնում նաև մի շարք երկրների կառավարությունները: Այսպես, ճապոնական իշխանությունները «Բուդդային» նվիրատվեցին մեկուկես միլիոն դոլար:

Կարևորը առջևում է: Ամենամեծ արձանը վերածվել է 4 հազար ֆրագմենտի (բեկորի): Դրանք կմիակցվեն որմնախորշերում մնացած բեկորների հետ և գիտական նկարագրություն անց կկացնեն այս տարվա ընթացքում: Զգձգելու հարկ չկա, որովհետև հնագետները վախենում են, թե ճարպիկ ձեռներեցները կթափանցեն բամփիան արձանի թանկարժեք բեկորները հափշտակելու և Եվրոպայի և Ամերիկայի սև շուկաներում վաճառելու նպատակով: Շվեյցարիայից ստացված տեղեկությունների համաձայն, արդեն մի քանի բեկոր հայտնվել է ժնևի կոլեկցիոներների մոտ:

Այդ տխուր լուրի հետ միաժամանակ Փարիզից ուրախ լուր հասավ. Ֆրանսիացի հնագետները պնդում են, թե առասպելական երրորդ Բուդդայի որոնման աշխատանքները տեղից շարժվել են: Ժամանակակից գիտությանը նրա տեղավայրն անհայտ է: Նրա գոյության մասին գրել են դեռևս մ.թ. 7-ր դարի հնագույն ճանապարհորդները, բայց այն ժամանակվանից առասպելական Բուդդային ոչ ոք չի տեսել:

Տխուր իրողություն

Իբր էս խեղճ ժողովրդի դարդերը քիչ են, հիմա էլ պարզվում է, որ Իրանից և Թուրքիայից ներմուծվող սննդամթերքի 34 տեսակներում պարունակվում են ծանր մետաղներ, որոնք անչափ վնաս են մարդու օրգանիզմի համար:

Համաշխարհային շուկայում նմանատիպ սննդամթերքները, հնացած, ժամկետանց դեղորայքն ու հագուստը վաճառվում են շատ էժան գներով, Ուրեմն և առավել մեծ շահույթ են ապահովում դրանք ներկրող խմբավորումների համար: Իսկ այնտեղ, ուր շահույթն է՝ մարդկանց առողջության խնդիրը մոռացվում է, դառնում է անկարևոր մանրուք:

Հայտարարելով այս մասին, Հայաստանի Հանրապետության Սպառողների իրավունքների պաշտպանության միության նախագահ Աբգար Եղոյանը միաժամանակ նշեց, որ անցկացված ստուգումների և հետազոտությունների արդյունքները ապացուցել են նաև, որ բացի ծանր մետաղներից, այդ սննդամթերքներում հայտնաբերված են հիվանդագին բացիլներ, աղիքային ցուպիկներ, հակաբիոտիկներ և այլ վնասակար տոկսիններ, որոնք գերազանցում են ընդունելի չափերը:

Ներմուծվող այդ սննդամթերքների շարքում վնասակար նյութերով հատկապես աչքի են ընկնում շոկոլադը, վաֆլին, փոշիով հյութերը, կենդանական և բուսական յուղերը, միսը, տարբեր համեմունքները: Այնպես որ, զգո~ույշ եղե՛ք, եթե, անշուշտ, հնարավորություն ունեք՝ գրպանի առումով:

Կորսիկա, Միջերկրականի բազմաթիվ կղզիներից մեկը: Բավական է ինքնաթիռի բարձունքից նայել կղզու ծովափին և հստակ կերևա, որ սա մի ժամանակ մայրցամաքին միացած տարածք է եղել և հետո, մեծ իջվածքի հետևանքով ցամաքն ընկղմվել է ջրի տակ և ահա այսպիսի տեսք է ստացել Կորսիկան: Գուցե հենց սա է հին Ատլանտիդայի առեղծվածի բացատրությունը:

ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՑԵՐ

Մի ներկայացման նախապատմություն

Տասը տարի առաջ, 1993 թվականին, Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը երաժշտասեր հասարակության դատին հանձնեց Դոնիցետտիի «Պոլիկտոս» օպերան: Ներկայացումը հիրավի մեծ հաջողություն ունեցավ: Դեռ այն ժամանակ շատերի մոտ հարց էր առաջանում՝ ինչո՞ւ է հատկապես Դոնիցետտիի այս, ոչ այնքան հայտնի օպերան բեմադրվում մեր թատրոնում: Նրանք, ովքեր դիտեցին ներկայացումը, ստացան այս հարցի պատասխանը: Պատճառը գիտեին նաև քիչ թվով լուսավորյալ մարդիկ: Այսօր մենք ուզում ենք փոքր ինչ լույս սփռել սույն բեմադրության և ստեղծագործության նախապատմության վրա:

...360 տարի առաջ ֆրանսիացի կլասիցիզմի հայրերից մեկը, հռչակավոր «Սիդի» հեղինակ Պյեր Կոռնելը գրեց «Պոլիկտոս» ողբերգությունը: Պիեսի հերոսը երրորդ դարի կեսերին ապրած մի հայ իշխան է, որն առաջիններից մեկն էր ընդունել քրիստոնեությունը և իր հայրենակից քրիստոնյաների մի մեծ խմբի հետ հռոմեացիների կողմից տանջամահ արվեց: Հայ իշխանի հետ նահատակվեց նաև նրա կինը՝ Պաուլինան, որը ծագումով հռոմեացի էր:

Այս տխուր ողբերգության գործողությունները ծավալվում են պատմական Հայաստանում, որը այն ժամանակ գտնվում էր Հռոմի տիրապետության տակ:

...165 տարի առաջ իտալացի մեծ կոմպոզիտոր Գաէտանո Դոնիցետտին Կոռնելի այս ողբերգության հիմքի վրա ստեղծեց «Նահատակները» օպերան, որն ինչ-ինչ պատճառներով անմիջապես արգելվեց գրաքննության կողմից: Միայն տասը տարի հետո օպերան բեմադրվեց Նեապոլում և ապա մոռացության տրվեց:

20-րդ դարի սկզբին այս օպերան նորից հնչեց բեմահարթակում, ըստ որում՝ գլխավոր պարտիան երգում էր մեծն Բենիամինո Ջիլլին:

Այնուհետև օպերան նորից մոռացվեց, ինչպես Դոնիցետտիի 70 օպերաների մեծ մասը:

Քսան տարի առաջ, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը բանակցություններ սկսեց Իտալիայի երաժշտական գրադարանի հետ՝ օպերայի օրինակը Հայաստանին նվիրելու համար:

Վեհափառ Հայրապետի խնդրանքը հարգվեց: Հայ իրականությանը, հայ իշխանի, նրա կնոջ ու առաջին քրիստոնյաների կյանքի ու նահատակության մասին դրաման, որ ստեղծագործության թեմա էր դարձել Պյեր Կոռնելի, իսկ ավելի ուշ՝ նաև նշանավոր Գաէտանո Դոնիցետտիի օպերայի համար, բեմադրվեց Հայաստանում՝ դառնալով հայ օպերային արվեստի ակնառու նվաճումներից մեկը: Բեմադրությունը իրականացրել էր Տիգրան ԼԵՎՈՆՅԱՆԸ:

ՎԱՐԿԱԾ

Տասներորդ մոլորակ. մնացի՞ա, թե՞ խորթ

ԱՅՆ արդեն մի քանի տարի բուռն կրքեր են բորբոքվում 10-րդ մոլորակի շուրջը: Այն, իբր, 2000 թվականին հայտնաբերել է ամերիկյան աստղագետ Ռոբերտ Մակմիլլանը: Ինչո՞ւ «իբր»: Որովհետև մի քանի անգամ այդ մոլորակը արդեն «հայտնաբերվել է», և այդ հայտնաբերողներից ոչ մեկը չի կարողացել ապացուցել, թե այդ երկնային մարմինը մոլորակ է, թե աստերոիդ:

Ամերիկացիները, որոնք կաշվից դուրս են գալիս սեփականելու այդ հայտնագործությունը, համառորեն պնդում են, որ այն իսկական մոլորակ է: Նույնիսկ բուռն քննարկումների թեմա է դարձել Պլուտոնի այն կողմում գտնվող նոր մոլորակի անվանակոչության խնդիրը:

Ըստ ավանդության, մոլորակները կոչվել են հին հունական կամ հռոմեական դիցաբանական հերոսների անուններով: Մինչդեռ ամերիկացիները «նոր մոլորակը» ուզում են կոչել իրենց հանգի ասենք «Վաշինգտոն» կամ նույնիսկ «Ջորջ Բուշ»:

Եվ շատ բնական եղավ Հունաստանի վրդովմունքը: Հույները վիրավորվեցին իրենց անմահ հերոսներին անտեսելու համար: Հելլենները փորձեցին անգամ ցույցի նման մի բան կազմակերպել ամերիկյան դեսպանատան առջև:

Հույները զայրացած աղմկում էին, իսկ ֆրանսիացիները բարձրաձայն քրքջում. «Մենք արդեն հաշիվը կորցրել ենք, թե աստղագիտության ոլորտի քանի-քանի անճարներ փորձում են թշվառական մի աստերոիդ մեզ վրա ծախել որպես մոլորակ: Իրականում այդ «մոլորակ» կոչվածը մեկն է այսպես կոչված Կոյպերի գոտու օբյեկտներից, որտեղ պտտվում են արեգակնային համակարգության կազմավորումից հետո մնացած «թափոնները»:

Ներկայումս հստակ է միայն մեկ բան. այո, Պլուտոնի հետևում կա ուշադրության արժանի երկնային մի մարմին: Ամենայն հավանականությամբ այն ունի վիթխարի սառցազանգվածի տեսք: Այնտեղ տեղի են ունենում հանելուկային, գրեթե միստիկ երևույթներ: Ստույգ է, օրինակ, որ Արեգակնային համակարգությունից այն կողմ ուղարկված «Պիոներները» և «Գալիլեոն» սույն, այսպես կոչված, «տասներորդ մոլորակի» մոտերքում կատարեցին անհասկանալի արագացում՝ խախտելով գրավիտացիայի մինչ այսօր հայտնի բոլոր օրենքները:

Ամերիկացիներին ամենևին դուր չեկավ ֆրանսիացիների չարախնդությունը: Բանը հասավ այնտեղ, որ գիտաժողովներից մեկի ժամանակ երկու աստղաֆիզիկոսներ՝ ֆրանսիացի Միշել Պանուն և ամերիկացի Ջերալդ Բասկինսը, խոսքակռվից անցան բռունցքների: Ջրավազանի մոտ սկսված քաշքշուկը ավարտեց նրանով, որ ֆրանսիացին մեկ հարվածով ամերիկացուն շպրտեց ջրավազանի մեջ:

Ոչ մեկը չգիտե, թե ինչպես կավարտվեն այս վեճ ու կռիվները: Ամերիկացիները հույսները չեն կտրում: Չէ՞ որ ժամանակին Պլուտոնն էլ չէին ուզում ճանաչել լիարժեք մոլորակ: Սակայն, այնուամենայնիվ, ճանաչեցին... Կունենա՞նք 10-րդ մոլորակ՝ ժամանակը ցույց կտա:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԱՄԵՆԱԿՈՒԼ ԵՐԱԽԸ

Գերբարձր ջերմություններից ծնվում է ալմաստը: Պարզվում է, որ Սև խոռոչը՝ տիեզերական առեղծվածներից մեկը, խոռոչ չէ, այլ մի գերհզոր աստղ, որը կլանում է ուրիշներին: Իսկ ահա վերջերս ամերիկացի աստղագետները հայտնաբերեցին մի մոլորակ, որը գերհզոր ջերմության հետևանքով հազարավոր կիլոմետր մեծությամբ ալմաստ է: Պարզվում է մեր երկիր մոլորակին էլ սպասում է նույն ճակատագիրը, այն էլ շատ շուտով՝ ընդամենը... 300 միլիարդ տարի հետո...

Վերջապես: Այն ինչ գիտնականները ենթադրում էին վերջին տարիներին, օրերս հաստատվեց: Եվրոպայի և Ամերիկայի գերհզոր աստղադիտակները արձանագրեցին այն պահը, երբ մեր Գալակտիկայի կենտրոնում գտնվող «Սև խոռոչը» մի քանի ակնթարթում պարզապես խժռեց իր ճանապարհին հանդիպած վիթխարի աստղը: Ըստ գիտնականների հետևությունների, սույն «Սև խոռոչի» գրավիտացիան այնքան ուժեղ է, որ ձգում, իրեն է մոտեցնում իր ճանապարհին հանդիպած երկնային մարմինները, չի փրկում անգամ աստղերի լուսային արագությունը: «Խոռոչը» իրեն մոտեցնելով երկնային մարմինը (ներկա դեպքում աստղը), մանրացնում-փշրում է, և ապա պարզապես կուլ տալիս: Եվ, ինչպես ասացինք, աշխարհի հզորագույն աստղադիտակները օրերս արձանագրեցին, թե ինչպես գալակտիկայում պակասեց մեկ աստղ այն անհետացավ «Սև խոռոչի» անհատակ երախում: Սա, անշուշտ «Սև խոռոչի» առաջին զոհը չէ և ոչ էլ՝ վերջին: Ո՞րը կլինի հաջորդ երկնային մարմինը. հավանաբար այն աստղը, որը «հիմարություն» կունենա հայտնվել գալակտիկայում շրջող «Սև խոռոչի» ճանապարհին: Այնպես որ, սիրելի ընթերցող, ամենևին բացառված չէ, որ ինչ-որ ժամանակ մեզ կուտեն: Այսինքն, ոչ այնքան մեզ, որքան մեր հետնորդներին: Սակայն, մեկ է, տհաճ է: Եվ դժբախտությունն այն է, որ այդ հարցում մեզնից ոչինչ կախված չէ: Որովհետև մեզ ճաշակելու մտադրություն ունի ինքը Նորին Մեծության «Սև խոռոչը»: Աստղաֆիզիկոսների դիտումներով «Սև խոռոչը» տեղաշարժվում է գալատիկայում և Երկիր մոլորակին է մոտենում 400 հազար կմ/ժամ արագությամբ կուլ տալով այն ամենը, ինչ հանդիպում է ճանապարհին: Ըստ որում, առանց բծախնդրության «չզզվելով» անգամ հին մոլորակներից և աստղերից: Իսկ ինչ վերաբերում է մեր փոքրիկ երկրագնդին, ապա աստղաբաշխական չափանիշներով այն պարզապես մի փոքրիկ համեղ պատառիկ է ամենակուլ հրեշի համար: Այսօր աշխարհի աստղաֆիզիկոսները կլանված աչք չեն հեռացնում սույն հրեշից: Եվ դա պատահական չէ. սա մինչև այժմ հայտնի «Խոռոչներից» առաջինն է, որը լկտիաբար շրջում է գալակտիկայում՝ լափերով ամեն ինչ: Իսկ ընդհանրապես, «խոռոչները» գերադասում են նստակյաց վիճակը: Ի դեպ, հենց որկրամոլությունն էր, որ գիտնականներին հնարավորություն տվեց հայտնաբերել նրան: Չէ՞ որ իրեն «խոռոչին», անհնար է տեսնել: Այ ուրիշ բան է նրան ճանապարհին հանդիպած հարևան մոլորակի գազային ամպերի տեղաշարժը, որին արդեն կուլ է տվել «խոռոչը»: Ահա հենց այդ գազերն էլ պատկերվեցին ժապավենի վրա: Համեմատելով լուսանկարները այլ տվյալների հետ, գիտնականները ոչ միայն հաշվարկեցին «Խոռոչի» տեղը, այլև անձամբ իրեն, շարժման ուղեծիրն ու արագությունը:

Սակայն առայժմ հրեշի երախից շատ վախենալու պատճառ չկա՝ գոնե մեզ համար: Քանի որ մինչև «Խոռոչը» մեզ հասնի, պետք կլինի ինը հազար լուսային տարի:

Արտերկրացի այցելուն

Ֆանտաստ նկարիչ Ռենե Մագրիտը 1980 թվականին այսպես է պատկերել արտերկրային այս այցելուի հանդիպումը մեր մոլորակի հետ:

(«Լյա Ռեշերշ»)



ԴՆԹ-50 տարի

Ճիշտ 50 տարի առաջ գիտության բնագավառում կատարվեց իսկական հեղափոխություն. դա ԴՆԹ-ի հայտնագործությունն էր, որի շնորհիվ հնարավոր եղավ կլոնավորել, ԴՆԹ-ի բջջի միջոցով ստանալ կենդանական աշխարհի տարբեր նմուշներ: Գիտությանը հայտնի են կլոնավորման մեթոդով աճեցրած ոչխարներ, հորթեր, հավեր, խոզեր ու շատ այլ կենդանիներ: Ծրագրեր են մշակվում (կամ արդեն իրականություն է) կլոնավորման եղանակով մարդու ստեղծման մասին:





Լուսանկարներում դուք տեսնում եք արհեստական ճանապարհով աճեցրած խոզերի (Բրիտանիա), իսկ ահա այս մեկ այլ լուսանկարում պատկերված է գերհզոր մանրադիտակը, որի օգնությամբ գիտնականները ուսումնասիրում են ԴՆԹ-ի բջիջները:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՑԱՎԵՐԻ ՍՊԵՂԱՆԻ

Այն մասին, որ երաժշտությունը բարերար ազդեցություն ունի մարդկանց առողջության համար, վաղուց, շատ վաղուց է խոսվում: Ավելին, վերջին տարիներին գիտնականները անգամ դիտարկումներ են կատարել և ապացուցել, որ լավատեսական երաժշտությունը ավելացնում է կովերի կաթնատվությունը, որոշ ծաղիկներ պարզապես փթթում են երաժշտության ազդեցության տակ:

Սակայն, ինչպես երևում է, գիտնականները ենթադրություններից անցել են հիմնավոր հետևությունների, այն է, որ երաժշտությունը իսկապես սպեղանի է մի շարք հիվանդությունների համար:

Նյու-Յորքում, օրինակ, շուրջ տասը տարի է, ինչ երաժշտությունը բուժման միջոց է դարձել ծխելու արատավոր սովորությունը, ալկոհոլիզմը և անգամ ճաղատությունը բուժելու համար:

Չինաստանում և Ճապոնիայում թողարկվում են երաժշտական հատուկ ձայնագրություններ, որոնք անգամ հատուկ անուններ ունեն, ավելի շուտ՝ հասցեներ, թե ինչ ցավերի համար են նախատեսված՝ «անքնություն», «միգրեն», «լյարդ», «թոքեր», «սիրտ»: Գնում ես ձայնագրությունը, բերում տուն, լսում և... օգնում է:

Սակայն հոգեբանների միահամուռ կարծիքով ամեն երաժշտություն չէ, որ օգտակար է: Աղմկոտ թմբուկների, սաքսոֆոնի վայնասունով լի երաժշտությունը կարող է մարդուն անգամ ուշագնաց անել, ծանր «ռոքը» խարխլել նյարդերը: Եվ եզրակացությունը միանշանակ է. օգտակար է դասական երաժշտությունը:

Ուրեմն, եթե ուզում եք սպեղանի գտնել ձեր հազար ու մի ցավերի համար, օգտագործեք ներքոհիշյալ երաժշտական դեղատոմսերը:

Սթրեսի, գերգրգռվածության դեպքում Շոպեն, Լիստ, Շուման:
Գերհոգնածության Գրիգ, Մուսորգսկի, դասական ռոմանսներ:
Ընկճվածության սովորական ջազ, բլյուզ:
Կենսական ուժերի սպառում Ռավել, Խաչատրյան:
Արյան բարձր ճնշում Մենդելսոն:
Գաստրիտ՝ Բեթհովեն:
Միգրեն շարունակական գլխացավեր՝ Դվորժակ, Գերշվին:
Եվ այսպես շարունակ: Ինչ իմանային մոլորակի մեծագույն կոմպոզիտորները, որ իրենց սքանչելի երաժշտությունը ինչ-որ ժամանակ, բացի իրենց ուղղակի խնդրից և նշանակությունից, կդառնան ցավերի վերացման սպեղանի: Եվ ինչո՞ւ ոչ: Չէ՞ որ երաժշտության արարումը վերուստ տրված Աստվածային շնորհ է:

ԲԻԲԼԻԱԿԱՆ ՊԱՏՈՒՄԸ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ Է

Աշխարհի գիտնականները վաղուց են փորձեր անում նյութական ապացույցներ գտնելու բիբլիական պատումներում նկարագրված իրադարձությունների և անցքերի ճշմարտացիությունը որոշելու համար: Բավական է միայն նշել դեպի Արարատ լեռ կազմակերպված մի քանի արշավախմբերը, ուր ըստ բիբլիական ավանդության հանգրվանել է Նոյյան տապանը:

Իսկ ահա վերջերս Իսրայելի և Անգլիայի մասնագետների մի խումբ հայտարարել է ցնցող մի հայտնագործության մասին. գիտատեխնիկական նորագույն միջոցների օգնությամբ հետազոտվել է Երուսաղեմի տակ գտնվող ստորերկրյա կառույցը, որը հայտնի է «Եզեկիայի թունել» անունով: Հաստատվել է թունելի բիբլիական տարիքը, այսինքն 30 դար, ինչի մասին վկայվում է Սուրբ գրքում:

Իսկ Աստվածաշունչը պատմում է, որ երբ Ասորեստանի թագավոր Սենեքերիմի զորքերը մոտենում են Երուսաղեմին, նրա տիրակալ Եզեկիան հրամայում է հողի տակ թաղել քաղաքի շուրջը եղած բոլոր աղբյուրները ու ջրհորները, որպեսզի թշնամիները ծարավից տոչորվեն: Աստվածաշունչը այնուհետև նկարագրում է, որ Իսրայելի ժողովուրդը կատարում է Եզեկիայի կարգադրությունը ավազով, հողով, քարերով ոչնչացնում են երկրում եղած ջրի բոլոր աղբյուրները, ջրհորները, ջրանցքները:

Այնուհետև Եզեկիան, ինչպես գրված է Աստվածաշնչի մեկ այլ գլխում, «կառուցել տվեց ջրատար և ստորերկրյա լճակից ջուր բերեց քաղաք», որպեսզի քաղաքացիները ջուր ունենան:

Ահա հենց այս ջրատարի ստորերկրյա թունելն էլ դարձել էր գիտնականների հետազոտության օբյեկտը: Ամենից առաջ ուսումնասիրվեց թունելի կավե հունի ծածկույթը, որը խնդիր ուներ պահպանելու, որպեսզի ջուրը չներծծվի և չկորչի գետնի ընդերքում: Ինչպես պարզվեց, որպես հիդրոմեկուսացնող նյութ հին երուսաղեմցիները օգտագործել են ոսկրի այյուր, փայտե ածուխ, մոխիր, ինչպես նաև ծառերի տաշեղ և բույսերի ցողուններ ու տերևներ:

Օքսֆորդի լաբորատորիայում կատարված ռադիոածխածնային հետազոտությունը հնարավորություն տվեց ճշգրիտ որոշել ծառերի տաշեղների և բույսերի ցողունների (ըստ որում հիանալի պահպանված), տարիքը: Ինչ վերաբերում է ծառերի տաշեղներին, դրանց տարիքը վերագրվում է 822 և 796 թվականներին մեր թվարկությունից առաջ: Իսկ բույսերի տարիքը 690-540 թվականներին, մեր թվարկությունից առաջ:

Ինժեներական արվեստի տեսակետից թունելը այն ժամանակվա համար եղել է կատարյալ կառույց: Ինչպես պարզվել է, 533 մետր երկարության ընդերկրյա թունելը փորվել է առանց միջանկյալ հորատանցքերի: Այլ կերպ ասած, այն սկսել են փորել երկու կողմից (բնականաբար ձեռքի գործիքներով) և ուղիղ մեջտեղում, առանց դույզն իսկ շեղումի, թունելագործները հանդիպել են իրար:

Եվ այսօր արդեն ռադիոածխածնային հետազոտության և հնագիտական տվյալների օգնությամբ վավերացված է ու հաստատված Երուսաղեմի տակ գտնվող ջրատարի բիբլիական տարիքը:

...Ի՞նչ անել

Ինֆորմացիոն և կենցաղային տեխնոլոգիաների զարգացման մեր ժամանակներում ավելի ու ավելի կնճռոտ խնդիր է դառնում հնացած, ժամանակն անցկացրած և փչացած սարքավորումները «ի՞նչ անելու» հարցը: Խոսքը վերաբերում է համակարգիչներին, հեռուստացույցներին, միկրոալիքային վառարաններին, երաժշտական կենտրոններին և էլեկտրոնային բազում ուրիշ սարքերի:

Աշխարհի էկոլոգները, բնապահպան կազմակերպությունները անընդհատ նախազգուշացնում են, որ հին, ոչ պիտանի տեխնիկական սարքերի ոչնչացման պարագայում առաջանում են բազում վնասակար թափոններ, որոնք պարունակում են շրջապատն աղտոտող, կենդանական աշխարհն ու մարդկանց թունավորող դիոկսին և կոնցերոգեն նյութեր: Դրանց հետևանքներն ակնհայտ են՝ անբուժելի ալերգիաներ, անհասկանալի-անբացատրելի հիվանդություններ, շարունակական հազ, քաղցկեղ և այլն:

Ճապոնացիները, որոնք լիուլի «ճաշակել են» մանավանդ քաղցկեղային հիվանդությունների բոլոր տառապանքները, առաջինը սկսեցին մտածել այդ չարաբաստիկ թափոնների մի մասը անվնաս դարձնելու ուղղությամբ և... կարծես գտան ելքը: Նրանք միտք հղացան համակարգիչների պատյանները այսուհետև պատրաստել... եգիպտացորենից:

Եթե ժամանակը գա, և պետք լինի ոչնչացնել այդ համակարգիչը որպես անպետքություն, ապա բավական է այն ցողել հատուկ ակրոզոլով, համակարգչի պատյանից կմնա մի բուռ անվնաս մոխիր, և մանավանդ՝ ոչ կոնցերոգեն:

Անշուշտ, եգիպտացորենային համակարգիչների օգտագործման առումով կան որոշ նրբություններ. այն չի կարելի թրջել, որովհետև փափկում է և փչանում: Ահա թե ինչու խորհուրդ է տրվում ունենալ դիսկետների մեծ պաշար, որովհետև չկա երաշխիք, որ այն պատահաբար չի խոնավանա՝ փչացնելով իր մեջ եղած ամբողջ ինֆորմացիան: Հայտնի է, որ եգիպտացորենային համակարգիչներն ավելի թանկ արժեն, քան պլաստիկային պատյաններով համակարգիչները: Սակայն էկոլոգիապես մաքուր սույն համակարգիչը և՛ մոդայիկ է, և՛ ավելի պատվաբեր:

Լարախաղացը կամ հավասարակշռություն ժամանակի, տարածության մեջ...

Գտնվել է ամենահինավուրց քանդակը

Նախնադարյան մարդը ստեղծել է ոչ միայն մինչև մեր օրերը հասած ժայռապատկերներ, այլև քանդակներ է կերտել ոսկորներից: Այս մասին է վկայում Գերմանիայի հարավ-արևմուտքի անձավներից մեկում գտնված սենսացիոն հայտնագործությունը: Գտնվել է մամոնտի ոսկորից քանդակված երեք ֆիգուր: Լոնդոնյան «Natur» ամսագիրը գտնում է, որ դրանք հնագետներին և պատմաբաններին հայտնի կերպարվեստի ստեղծագործություններից ամենա-ամենահինն են:

Ռադիոածխածնային հետազոտությունը ցույց տվեց, որ գտնված փոքրիկ քանդակների հասակը 30 հազար տարուց պակաս չէ: Հինգ սանտիմետրանոց ֆիգուրներից մեկը բադանման թռչուն է, մյուսը ձի հիշեցնող կենդանի, իսկ երրորդը մարդ է առյուծի մռութով: Ուլմ քաղաքի մերձակայքում, ուր գտնվել են այս քանդակները, տարիներ առաջ հնագետ Նիկոլաս Կոնարդը հայտնաբերել էր ուրիշ 17 քանդակներ և երաժշտական գործիք (շվի հիշեցնող): Նրա կարծիքով այս գտածոները վկայում են, որ նախնադարյան արվեստը Դանուբի վերին հոսանքի շրջակայքում զարգացած է եղել վաղ պալեոլիթի շրջանում:

Այս մոտեցումը հերքում է գիտնականների այն պնդումները, թե հինավուրց քարայրերի բնակիչները միայն ու միայն պարզագույն պատկերներ են նկարել քարանձավների պատերին և շատ ուշ միայն ստեղծել ավելի կատարյալ ստեղծագործություններ:

- Նորագույն պեղումները ցույց նե տալիս, որ մեր նախնիները դեռևս շատ հին ժամանակներում կերպարվեստի տարբեր բնագավառներում օժտված են եղել զարմանալի տաղանդներով,- արձանագրում է ամսագիրը:

Այս հետևությունը հաստատում են նաև մոլորակի այլ տարածքներում և, մանավանդ, Աֆրիկայում կատարված պեղումները, որը համարվում է մարդկության օրրանը: Օրինակ, գիտնականները ենթադրում են, որ Զամբիայի մայրաքաղաք Լուսակայի մոտերքում գտնվող Թվին Ռիվերս քարանձավի պատերին պահպանված ներկի հասակը 35 հազար տարի է:

«ԻԶՎԵՍՏԻԱ»

Մրցույթ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հումանիտար գիտությունների բաժանմունքը հայտարարում է մրցույթ ՀՀԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի թափուր տեղի համար:

Թեկնածուի հիմնավորված առաջարկությունը մեկ ամսվա ընթացքում ուղարկել հետևյալ հասցեով՝ Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող., 24, ՀՀԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունք, հեռ. 52-77-22:

ՀՀԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունք



Հայտարարություն

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը հայտարարում է մրցույթ հետևյալ տեղերի համար.

ա) Առաջատար գիտաշխատող (գիտությունների դոկտոր)
1. Ազգագրություն-1 տեղ
բ) Ավագ գիտաշխատող (գիտությունների դոկտոր կամ թեկնածու)
1. Հայաստանի վաղ հնագիտություն-1 տեղ
2. Բանահյուսություն-1 տեղ
3. էթնոսոցիոլոգիա-2 տեղ
4. Ազգագրություն-4 տեղ
գ) Գիտաշխատող (գիտությունների թեկնածու)
1. Հայաստանի վաղ հնագիտություն-1 տեղ
2. Ազգագրություն-1 տեղ
3. Մարդաբանություն-1 տեղ
դ) Կրտսեր գիտաշխատող
1. Հայաստանի վաղ հնագիտություն-2 տեղ
2. Բանահյուսություն-1 տեղ
3. Ազգագրություն-1 տեղ

Դիմումների ընդունման ժամկետը մեկ ամիս հայտարարությունը հրապարակելու օրից: Լրացուցիչ հարցերով դիմել Հնագիտության և ազգագրության ինստիտուտ. Չարենցի 15, հեռ. 55-68-96



Թերթի նախորդ համարում հրապարակված «Լեռնահանքային արդյունաբերության հիմնախնդիրները» նյութի վերջին սյունակի երկրորդ պարբերությունում բաց է թողնվել հայոց լեզվի և գրականության մասնագետ Ամալյա Բաղդասարյանի ազգանունը:

Թունիսցի այս պատանու բախտը բերել է. ծովի ալիքները դեպի ափ են քշել կորալյան մի խութ, որը, գուցե, միլիոնավոր փոքրիկ կորալների վերջին հանգրվանն է: Ի՞նչ հրաշք ասես, որ չի հրամցնում բնությունը:

ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐՅԱՆ

Գյուղիս ճամփան

Կյանքի նավակն հետք չի թողուց իր ետին,
Մոռացումը առավ ինձմե ամեն բան,
Հին երազներս ամպերու պես կ՚անհետին,
Հիշատակն ալ կ՚անցնի երգի մը նման:
***
Հոգիս սակայն կը հիշե՛ քեզ,
Դուն ծաղկավետ գյուղիս ճամփան,
Ուր քալեինք գառնուկս ու ես,
Դեպի պուրակն ու բուրաստան,
Անմեղության երազին պես:

Ու քովիկեդ դողդողագին
Սահեր աղվոր վճիտ առուն,
Մերթ կամուրջին ու մերթ մարգին
Տակ պահվելով կ՚երթար հեռուն,
Ամայության իբրև ոգին:

Բարակ, նիհար քանի մը ճյուղ
Կը զատվեին վտիտ բունեդ,
Մին կը դիմեր դեպ՝ անշուք գյուղ,
Կը տարածվեր, կ՚ըլլար անհետ,
Բոլորելով խրճիթն ու հյուղ:

Մին մագլցեր բլուրն ի վեր,
Մյուսը կ՚իջներ ձորակեն վար,
Ուր ուռենին կուտար ստվեր,
Ու սրինգն իր երգը կուլար,
Զոր կրկնեի՛ն գարնան հովեր:

Ձմռանն ալ երբ ձյունն սպիտակ,
Կը գտներ մեզ շուրջ թոնիրին,
Անհետ կ՚ընէր իր ծալքին տակ
Մեր հին գյուղին վտիտ ուղին,
Ինչպես մարգերն ու մանիշակ:
***
Տաշված քարե ուղիղ ճամփան
Կը տանի զիս արդ ի ծովափ,
Կը ճմլվի՛ հոգիս սակայն,
Մտածումով մը հրատապ,
Ուր կը թռչիմ հին մանկության:

Հոն՝ փակ թեև՝ սակայն աղվոր
Ու երփնագե՛ղ էր հորիզոն,
Հմայքներով լի բյուրավոր
Անմեղությունը խայտար հոն
Ճամփուն վրա ոլոր մոլոր:

Մին՝ մագլցեր բլուրն ի վեր,
Մյուսը կ՚իջներ ձորակեն վար,
Ուր ուռենին կուտար ստվեր.
Սրինգն ալ իր ե՛րգը կուլար,
Զոր կրկնեի՛ն գարնան հովեր:
***
Կյանքի նավակն հետք չի թողուց իր ետին,
Մոռացումը առավ ինձմե ամեն բան,
Հին երազներս ամպերու պես կ՚անհետին,
Հիշատակն ալ կ՚անցնի երգի՝ մը նման...

Իզմիր

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝
Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ,
հեռախոս՝ 56-80-14:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝
448: Ստորագրված է
տպագրության՝ 17.03.2004 թ.
"ГИТУТЮН" ("Наука")
газета НАН РА

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
թերթը հրատարակվում է
հովանավորչական միջոցներով: